


Գորբունով - Պոստով և և  
Ռուգով վեհակ

3459

Առաջնային օրին Տարա  
Ռուբ և առ Հուն:

Բարձ.՝ գ. 2.

1116



Վաղարշապատ  
1899


110 8

112003





91.71  
- 81



ՏԱՐԱՎՈՐԵԱՆՆԵՐԻ ՖԻՆԵՅՑ ԱԹԽԱ  
ՆԱՐԵ ՇԱԽԵՆՔ.

1) Հարասուրինը գեղեցիկ է և  
ցանկալի քանի և բայց և այլի-  
պես ազիտ բնաւորութեան ժր-  
մարդի առաջի շուր կրցանիկայ  
յուսոյ հասարակաց բարեզործու-  
րկան վրայ և վճռել ապահու-  
անցում մենակը յան քե հաւրա-  
սուրեան եւելից ընկերութ խոր-  
ուզութել ուսուրութեան սովոր մեջ:

Անդրեաս Գաբրիէլի.

2) Մարդկային ազգի խնկական և  
բաւագոյն բարեւար նա չէ ու  
զինում և յուր փողերը յօդուտ  
մերձաւուին այլ նա՝ ու ինչպիս-  
իք սովիս և յունիւունիւի ծա-  
ռայութեան:

Ա. Ամայլու.

I.

Հենդ հարփուր տարի սրանից առաջ,  
ֆրանսիական Ֆօմալելիէ քաղաքում, մեն հա-

բուօս և նշանաւոր ընտանիքում ծնուեց  
մի արու զաւակ, որին Ոօխ անունը տուին:

Ոօխի ծնողներն ապրում էին գեղեցիկ  
ամրոցում, որ լի էր զանազան տեսակ թան-  
կագին գտնձելով, որոնք հաւաքել էին առ-  
պեանեցը — Ոօխի պապեցը հեռաւոր երկր-  
ներում ունեցած պատերազմներից:

Քրանեսիական ըոլոր առպեանելի մեջ  
ամենից աւելի նշանաւոր էր իւր պատե-  
րազմական քաջագործութեամբ Ոօխի հայ-  
րը: Եթի թագաւորը առպեաներին պատե-  
րազմի կանչեց, նաև առաջինը եղաւ, որ լոե-  
լով իւր թագաւորի հրամանը ուկեզօծ  
դրահներով սպառազինուած՝ երեք հարիւր  
ընտիր ձիաւորներով ներկայացաւ թագաւ-  
որին:

Նորա դաժան գէմքը ծածկուած էր  
թշնամիների հարուածներից սաացած սպի-  
տերով: Սակայն նորա ուուրն ես շատ ան-  
դամ էր ցցուել թշնամու կու սծքը և գե-  
տին գլուել:

Նորա որդին ըոլուսովին խաղաղ և հան-  
գիստ էր մեծանում: Իզուր էր աշխատում  
հայրը սովորեցնել նրան նետ ձգել, նիզակ  
և ուռ բանեցնել, ձի հեծնել: Սանու կը  
փախ էր տալիս արդպիսի կըթութիւնից



52856-ար

57179. ենա

ամբոցի մի փոքրիկ և հեռաւոր աշտարակ  
և այնտեղ թագնուում էր հօր զայրոյթից:

Նա աճում էր և հասակին առնում և  
վերջապէս մի դեղեցիկ խոհուն պատահի  
դարձաւ:

Եւր հօր ըստեկամների որդեքը աչքի  
էին ընկնում ըազեով ուսուրգութիւն անեւ  
լիս, ծնողների հետ մասնակցում էին խըն-  
ջոյքների և աշխատում էին հաճոյանալ  
օրիորդներին: Ոօիսին երեք նոցա մէջ չէր  
կարելի տեսնել: Վաղ ոկտեց սիրել մտածե-  
լու Առաւեճոյ մասին, խորասուզուել ոտըր  
զբոց մտքերի մէջ, որ պարունակում է իւր  
մէջ անարատ սիրոյ և վեհ ողորմութեան  
հոգի:

## II.

Ոօիսը գեռ քսան և հինգ տարեկան  
չէր զառել, եսը յանկարծ, մէկը միւսի յեւ-  
տեից, մեռան նորա հայրն ու մայրը: Ոօիսը  
սառնասրատ թեամբ տարու իւր ծնողների  
մահը, նա թէե որը մնաց, սակայն հարուստ  
էր և ազտաւ: Երիտասարդը չէր կամենում  
կառավարել իւր հարսաւթիւնը, նա հա-  
գաւ ազքատ օտարական - ուխտաւորի հա-

գուստ և գիմեց պանդխտութեան գէպ հին  
Հռովմը, որպէս զի այնտեղ՝ ստորեսկրեաց  
այրերում, երկրպագէ քրիստոնէութեան  
մարտիրոսների շիրիմներին:

Հռովմը գտնեռում է Խոալիայում, ահա  
այդ երկիրն ընկաւ Թօխը: Հէնց նոր էր ոս-  
քը այնտեղ գրել, երբ իմացաւ, որ խտալա-  
կան բաղմաթիւնահանգներում ժանտախտը  
զարհուրելի կոտորածներ է անում: Ճանտ-  
պարհին Թօխին հանգիպում էր հասարակ  
ժողովուրդը վճառուած դէմքերով, որոնք  
շտապում էին գէպ հեռու երկիր, կարծես  
թէ նոքա հալածուելիս լինէին անտեսանե-  
լի խարազանից: Եւ որքան նա յառաջ էր  
դնում, այնքան աւելի էին հանգիպում այդ-  
պիսի մարդիկ: Հարթւրաւոր տղամարդիկ և  
կանայք խիտ սեղմուած էին սայլերի վերայ  
իւրեանց բոլոր կարառէքով: Սակայն աւելի  
յաճախ օտարականի մօտով որարշաւ ձիերի  
վերայ նստած և ոսկեղօծ կառքերով անց-  
նում էին ասպետները և իշխանները իւր-  
եանց ընտանիքներով: Պատահում էր որ  
երբ Թօխը ձայն էր տալիս հասարակ ժողո-  
վըրդին և կանգնեցնում նոցա և տպա հարց  
ու փորձ անում, թէ ուր են դնում և որ-  
տեղից են գալիս — ճանտպարհորդները տը-

խուր կերպով պատասխանումէին, որ փախա-  
չում են մահուան ճանկերից, ևսկ ԱՀ նոր  
այդ իրանք էլ չգիտեն:

Չատ քաղաքներ, որոնց Երեք Տերը  
գիտել ժամանակաբ, շրջապատճենութեան  
պահապաններով: Պահապանը հարց ու փարձ  
էր անում ամեն անցորդի և ժամանականու-  
ների ընակիններին չէր թողնո՞մ քաղաք  
ներս մտնելու:

Ոսխը շարաւնակեց իր ճանապարհը  
գեղագուած, նորան պատահումէին ժամանակ-  
առով վարակուած քաղաքներ և գիւղեր, ո-  
րոնցից մահուան հատ էր փշում: Նա տեսնում  
էր թէ ինչպէս հոգեւորքի ժամանակ տեղի  
ունեցող ջղաձգութեան մեջ տարօքինակ  
շարժումներ էին անում մեռնողները, տես-  
նում էր հարիւրաւոր աներ փակ գուներով,  
որոնց ընակիններից մի մասը մեռել էին,  
միւսները փախել, ուր որ իւրեանց ազքերը  
տեսնում էին:

Հազարաւոր մարդիկ կորչում էին ժամա-  
նակատից սարսափելի առնջամնըներով, ա-  
նօգնական դրութեան մեջ: Առողջներից մի  
քանիսը երկիւղից թագնուում էին ժամանակ-  
առով վարակուածներից, անուշադիր թողնե-  
լով իւրեանց բարեկամներին և ազգական-



Ներին, միւսները քարտացած որտերով անց  
էին կայնում իւրեանց օլերը արթեցողու-  
թեամբ և զեզիս կեանքի մէջ բռպէ առ բռ-  
պէ սպասելով իւրեանց մահուան:

Քայց լոյսը մութ տեղն էլ է լուսա-  
որում: Թօխը տեսնում էր նոյնպէս և մի  
քանի այլ մասդիանց, որոնք աներկիւղ կեր-  
պով իրանց անձը նուիրել էին ժանտախտով  
հիւանդացողներին խնամելու: Նոքա մինչեւ  
անդամ մեռելներ էին թաղում ժանտախտով  
ըսնուածների համար առանձնապէս  
որոշուած խոր փոսերի մէջ, որպէս զի նոցա-  
գիակների հոտը օդը շապակոնէ:

### III.

Տեսնելով մարդկային այդպիսի տան-  
ջանքներ, Թօխը այլ եռ չկարողացաւ դ'սալ  
դէպ Հռովմ տեսնելու պապին և այրերը:  
Նա մնաց ժանտախտով վարակուած քա-  
ղաքում և սկսեց ծոռայել հիւանդներին:  
Եւ ահա երկար ժամանակ թէ ցերեկուայ  
լուսի և թէ զիշերուայ մթութեան մէջ  
ժանտախտով հիւանդները տեսնում էին  
իւրեանց բարձի մօտ ոչնչից չվախեցող մի  
մարդ, որ թեթեացնում էր նոցա տանջանք-

ները ժայվայող մօր հոդատարութեամբ:

Դորա սնձանձրոցի ձեռները ժամանախ-  
առանենքի համար առազջարար խմելիքներ  
էին պատրաստում, զավացնում էին նորանց  
ըսրբոքուած շրթունքները և լուսնում նո-  
ցա գարշահատ մարմինը:

Գրեթէ ամենայն օր Թօխը տեսնում  
էր իւր մօտ կանդնած մահը, հանգարա նո-  
յում էր նորա աչքերի մէջ, բայց մահը նո-  
րոն չէր մօտենում:

Յեւեկ և զիշեր հառաջանքների, հե-  
կեկոցների և անէծքների մէջ, լուսում էր  
Թօխի խրատիչ խօսքերը, որ քաջալերում  
էր հիւանդներին համբերութեամբ տանել  
տանջանաց խաչը, յանձնելով իւրեանց կեան-  
քը Աստուծոյ կամքին: Ըստ անդամ՝, երբ  
Թօխը դնում էր հիւանդներին այցելու-  
թեան, ճանապարհին հարաւատ աների մօ-  
տով անցնելիս, լուսում էր լուսամուտներից  
ուրախ երաժշտութեան ձայներ և սեղա-  
նակիցների տղմկալից բացականչութիւններ:  
Դա ներս էր մտնում երբեմն և ազաշում  
նոցա խելքի դաէ և մաքուր որսով ու հե-  
զութեամբ մտարերել այն հոդեարքի ժա-  
մը՝ որ կարող է շատ մօտ լինել նոցանից  
իւրաքանչիւրին:

Ամենակատապղիներն անդամ հանդարտում էին այդ համեստ մարդու հայեացք առաջ, հայեացք, որ չգիտեր, թէ ի՞նչ է քունն ու հանդիսալ, շնորհիւ իւր անխոնջ և անվերջ դործունեւ թեան։ Նա մշտապէս նստած էր լինում հիւանդի մահճի մօտ որպէս հիւանդապահ մի կին։

Չատ անդամ Թօխի յորդորները զբօսաններ ամբոխի միջից դուրս էին բերում թէ աղամարդկանցից և թէ կանանցից մի քանի հետեւողներ, որոնք, խոնարհելով իրենց հայեացքը՝ զզջման արտասուքներն աչքերին, փախչում էին սանձարձակ խնջոյքից։

Յաճախ նոքա մօտենում էին Թօխին և հրահանդ ուզում հիւանդներին ծառայելու համար։ Չատ անդամ շատերը ուրախութեան համար զարդարուած և փարթամ գոհինիցից հետեւում էին նորան դէպի աղքատութեան մուայլ քարայրը, որտեղ վարակուածները, աչքից հեռու, նեղ և խոնաւեղերում, ցեխի մէջ քաշ էին դալիս և վարակում իրենց առողջ եղբայրակիցներին։

#### IV.

Թօխի ձեռների լերայ մերձ ի մահ ըն-

կած էր գեղեցիադէմ և կապուտաչեայ մի  
մանուկ։ Վանեկան սննիոցնու մօտ կանգնած  
էր մի մեծ և բրդոտ շուն, որը իւր թաթե-  
քը զբել էր նորա բարձի վերայ։ Ծան խելացի  
աչքերը այնքան տիրութեամբ նայում էին  
մեռնող մանեկան վերայ, որ կարծես զգալիս  
լինէր վերահաս մահաւան գաղտնիքը։

Վեռաւ մանուկը և երբ Թօխը ըն-  
կերների հետ միասին մանուկի մարմինը  
զբն պատգարակի վերայ և տանում էին  
ժանտախտով մեռածների գերեզմանատո-  
նը, շունը հետեւում էր նորանց։ Գերեզմա-  
նատնից վերադառնալիս կենդանին հետե-  
ւում էր Թօխին։ Աերջինո չհեռացրեց նո-  
րան, որովհետեւ առհասարակ սիրումէր ա-  
մեն մի կենդանի էակ։ Հաւատարիմ կեն-  
դանին այլ եռ չէր հեռանում նորանից։

Թօխը իր մշտական ընակութեան հա-  
մար ոչ մի անկիւն չունէր։ Նորա տունը  
այնտեղ էր, որտեղ հիւանդ էր գանում։

Ծունն եռ միշտ պատպարում էր  
նորա մօտ։ Թօխը բաժին էր հանում նորան  
իւր համեստ կերակրից—մի բուռ շաղանակ  
և մի թառ ջուր։ Պժուար թէ նորանից ա-  
ռելի հնագանդ և խելօք կենդանի գանու էր։

V.

Արդէն ժանտախտը վերջացել էր: Ամեն ուրեք կեանքը արթնացել էր: Փայլեցին գաֆան գէմքերը, արհեստանոցներում լսելի էին ուրախ երդերը, փախստականները վերադառնում էին հետզհետէ կենդանութիւն ստացող քաղաքը: Քաղաքում միմիայն երեք մարդ պառկած էին. ժանտախտով հեւանդ ծերունի քաղաքավետը և երկու երիտասարդ կին: Կոցա շրջապատել էին բաղմահող խնամքով:

Վէկ անգամ Թօխը նստել էր ժանտախտահար քաղաքաղլիսի անկողնու մօտ: Երկու ամբողջ օր նա առանց հեռանալու անց էր կացըել նորա հարուստ ննջարաւնում, որի պատերը զարդարուած էին հրաշալի նկարներով: Այդ տեղ ուն վայտից քանդակավործուած մահճակալի վերայ, մետաքսեայ սաւանի տակ պառկած էր հաղիւ շնչող ժանտախտահար ծերունին: Նորա աչքերը խորն էին ընկել գէմքը մեռելի գոյն էր ստացել, քիթը սրուել և սպիտակ մազեսի խոպոպները դպրուած գիզուել էին գլխի վերայ:

Ծերունին վախենում էր մահուանից:

Նա շատ էր ցաւում, որ բաժանուելու է  
իւր կըխանութիւնից և հարստութիւնից:  
Նա համբուրում էր Թօխի ձեռքը և աղա-  
չում աղատել իրան մահուանից, բայց այս  
անդամ Թօխը չէր կարող քաջալերական  
խօսքեր առել: Կորա գլուխը պատուեց, սար-  
ուու անցաւ նորա մարմնի միջով:

Ծերունուն գեղ խմեցնելուց յետոց,  
Թօխը գուրս եկաւ փողոց, որպէս զի զո-  
վացնէ իր այրուող գէմքը: Նա նստեց պա-  
տըշդամբի վերայ, շունն էլ նորա մօտ:

Արեն արդէն մայր էր մանում: Հե-  
ռաւոր գաշտերից բուրում էր երեկոյեան  
զովութիւնը:

Բայց և այնպէս նորա դլիսի ցաւը ըր-  
թեթեացաւ: Նորա ճակաաը և քունքերը  
մի տեսակ ճնշման ծանրութեան տակ նեղ-  
ւում էին: Սարսուաը քանի դնում աւելի  
տասուկանում յուզում և խոռվում էր նորա  
մարմինը: Նա խելսյն հատկացաւ, որ իւր  
մէջ մի ինչ որ փոփոխութիւն յառաջացաւ.  
Նա զգաց, որ ժանտախտի առաջին նշան-  
ներն էին դոքա:

Թօխը վայր իջաւ պատշդամբից և կա-  
մենում էր շարունակել ճանապարհը: Ճա-  
նապարհին նորան հանդիպեց նիհար գէմքով

մի երիտասարդ քաղաքացի, որ քիչ առաջ  
ժամանականվ ըստու ել էր և որին Աօխն եր  
ինամում:

Տեսնելով նորանոց Աօխը յետ ու յետ  
գնաց, երկարացը իւր ձեռքերը և առաց:

— Բարեկամ, մի մօտենար ինձ, ես  
ժամանականվ ըստու ած եմ:

Քաղաքացին նոյնպէս յետ յետ գնաց,  
ըստոց իսկոյն մեղմացնելով իւր վախը, առաց  
ցաւալի կերպով:

— Ես վազուց ուզում եի քեզ ահոնել  
և շնորհակալութիւնն յայտնել քո ողովմա-  
ծասիրութեան համար: Այժմ, ինչպէս ինքզ  
ասում ես, նոյն թշուառութեան մէջ ես,  
թոյլ տուր ինձ ուրեմն ծառացութեանդ  
փոխարքնը հասու ցանեմ:

— Խոզը ում եմ քեզ, սիսելի եղբայր,  
մի մօտենար ինձ, պատասխանեց Աօխը,  
եթէ կարող ես խնամմիր, միսիթարիր կեն-  
դանի մարդկանց, իսկ ինձ՝ երբէք, որովհե-  
տե մահուան զերանզին անցել է իմ վերա-  
յից:

— Ասուած ես քեզ կազմաց, ինչպէս  
ինքզ մեղմացիր, պատասխանեց քաղա-  
քացին:

— Մահը չէ ինձ սարսափեցնում, առաց

Թօնը: «Ես միայն կամենում եմ շուտով  
հեռանալ քաղաքից: Փանափառը իւր վախ-  
ճանին ժօռ է և եթէ իմ մարդատէր բարե-  
կամները իմանան, որ ես հիւանդ եմ, կպան  
ինձ ժօռ այցելութեան և իմ այս մեռնող  
մարմինը կարող է մարդկանց նորանոր զբժ-  
րագութեանց պատճառ դառնալ: Ազա-  
չում եմ քեզ, մոռացութեան տուր ինձ,  
մի հետեւը ինձ: Միայն առաջ իմ բարեկամ-  
ներին, որ այս տան մէջ, ինամուտ ձեռքե-  
րից զուրկ մեռաց մեռնող ձերոնին:

Այն ժամանակ քաղաքացին ասաց Թօ-  
նին:

—Քեզ մոռանալու իրաւունքը իմ եշ-  
խանութիւնից վեր է, բայց մնացածը այն-  
պէս կկատարեմ, ինչպէս ինքդ ասացիր:

—Քաղաքացին կամենում էր հեռանալ,  
բայց Թօնը կանգնեցրեց նորան: Թօնի ոո-  
քերի առկետած էր նորա շունը և ուշա-  
գրութեամբ նայում էր իւր տիրոջ վերայ:   
Քաղցրութեամբ նայեց նորա վերայ Թօնը,  
թեքուեց, շոյեց նորա զլուխը և ապա դառ-  
նալով գեղ եվիտասարդն, ասաց.

—Ահա ընծայում եմ քեզ իմ շունը,  
պահպանիր նորան, որից յետոյ հրամայեց  
շանը մօտենալ քաղաքացուն:

— Մնաս քարով հիստեղների միակ քարեկամ և վշտակիրների միտթարիչ, ասաց երիտասարդը և հեռացաւ նորանից, ձեռքեւրի մէջ առնելով իր դէմքը, որի վերայով հոսում էին արտաստոքի կաթիլներ։ Թօխի հրամանի համաձայն հնագատնդ կերպով նորա Գօտաբ շունը հետեւեց երիտասարդին։ Բայց մի քանի անգամ էլ հաւատարիմ կենդանին դարձու և նայեց իւր տիրոջը։

## VI.

Խաւարը պատել էր ամբողջ քաղաքը։ Թօխը աւելի պինդ կերպով վկաթաթուեց իւր հին վերարկուի մէջ և մեծ դժուարութեամբ ուղղեց իր քայլեմն դէպ արտաքածանը, անցնելով, որքան կարելի է, ամայի և նեղ փողոցներով։

Այն ժամանակ, երբ նա գնում էր ընտակարաններում՝ ճրադները մարել էին։ Դանդաղ քայլերով նա մօտեցաւ քաղաքագուանը։ Այդ տեղից ևս գուրս գալով նա բարձրացաւ քաղաքի պատնէշի վերայ, ապա իջաւ նեղ շաւզով ցած և հնձուած արտերի միջով շարունակեց իր ճանապարհը։

Մութը քանի գնում աւելի և աւելի

թանձրանում էր: Բայց ահա որտեղից որ էր  
Երկնքի վերայ երեաց մի ազօտ լուսաւոր  
ասաց, ապա երկը արդ, երրորդը և այլն:  
Եւ սփռուեց ամեն կողմ՝ նորանց արծաթա-  
փաց լոցար, որտեղ ազօտ փայլիլոցի մէջ  
նորանում էր կազնիների փոքրիկ անտառը:  
Անտառականմ հանգալստ քչքչում էր աղ-  
բերակը: Ոօխը փռուեց ջրի վերաց, մի լու  
խմեց, թրջեց առքացած զլուխը և ջրով լոց-  
ըց ճանապարհուղական ջրամանը, որը միշտ  
և հանապատ կախուած էր լինու ժ' նորա  
կողքից: Քորանավ էր զավացնում հարիւրա-  
ւոր ծարաւողների պապակը:

Այդ աեզեց անցաւ հին, հզօր կազնին-  
ների անտառը: Արդէն վերջանում էին մարդ-  
կանց բացած շատ իզները և ոկտում էր իր  
խուլ անտառը: Խիստ ճիւղերը փակել էին  
ճանապարհը, կալչում էին Ոօխի վերարկուին  
և չանկուտում նորա զէմքը:

Ոօխը կանգ տռաւ մի փոքրիկ հով-  
տում, որ շրջապատուած էր խիստ դաբաւոր  
կազնիներով: Նա վայր զցեց իւր վերար-  
կուն, հանեց ջրամանը և ոստավիկ յաղնա-  
ծոթիւնից վայր ընկաւ զետին: Նոյն բո-  
պէին խոր քունը փակեց նորա աչքերը:



VII.

Անհանդիսու էր Թօնիք քունը: Առ ես  
սպառում մի զարհութելի հրդէն էր տեսնում:  
բարձրացած հոկայական հրային լեզուները  
շրջապատել էին նորան չորս կազմից և նո  
աշխատաւ մ էր համբերութեամբ տանել այն  
զարհութելի տանջանքները:

Թօնը զարթնեց խիստ ջերմացին գրու-  
թեան մէջ, նորա սիրաք ամբողջապես այր-  
ուում էր, ուստի վերցնելով ջրամանը, ա-  
զահաբար քամեց մինչև նորա վերջին կա-  
թիւը:

‘Ծաւերի դադաթների միջով հեռաւոր  
բաց կապոյտ երկնքից արևի կէսօօսուաց ճա-  
ռագայթները թափանցելով սովորոյն բժե-  
սով խաղում էին կազնիների մամուսպատ  
րծերի վերայ:

Թօնը մի լինչ որ խաւաբ զգաց իւր  
աշքերի մէջ: Նո ոյժից ընկնում էր, ան-  
դամները դադարեցին շարժուելուց:

‘Ծարսւը նորան տանջում էր բայց  
ջրամանը զատարկ էր: Նո լինքը անկարող  
էր աեղից շարժուել: Սաստիկ թաւլութիւ-  
նից նո քնեց, բայց քաղցն ու ծարսւը նո-  
րից նորան զարթեցըին: Քնի մէջ նո երա-

զում էր որ, իւր թէ մէկը նորան զարթեց-  
նում է, բայց է անում նորա պատրակուած  
շրթունքները և ըերանն լցնում մի տեսակ  
զովացուցիչ հեղուկ:

Թօխը զարթնեց: Անտառը խորին լուս-  
թեան մէջ էր, և միմայն թռչունները ճիւ-  
ղեց ճիւղ էին թռչկոտում: Յանկարծ մի  
կանաչ գոյն ունեցող թռչուն նոսեց Թօխի  
ձեռքին: Բզեզդները և մընիկները նորա  
մարմնի վերայով ման էին զալիս, վե-  
րեւում ճուռզում էին խաղաքանիկի (Երա-  
սուցչի) ձադերը:

Արեգակին արդէն մայր էր մտնում:  
անտառը խիստ զով էր: Տերեների մէջ  
մեզմ զեփիւռ էր փշում, որ կարծես մտ-  
սամբ կաղզուրեց Թօխի մարմինը: Յա այժմ  
իրան աւելի թեթև էր զզում: Շաղն էւ  
այնքան անտառնելի չէր: Յա արդէն կարտ-  
զանում էր ձեռները շարժել, ձեռներով մի  
բոյն քաղեց և սկսեց ծամել: Խոտերի մէջ  
կային թթու համ ունեցող բայսեր ևս որոնք  
մտսամբ մեզմացնում էին Թօխի ծարար:

Գիշերուան մօտ նորա խառնաշխոթ  
մաքերը սկսեցին պարզուել: Յա քնաց, հան-  
ցիստ կեցպով մտածելով մոհուան մտինս  
որ նորա կարծիքով, շատ հեռու չէր:

### VIII.

Այս անգամ Թօխը մի զարժանալի երազ ահաւու, սպազես թէ մէկը մէզմ ձայնով տառամ էր նորան:

—Աերկաց և արի:

Թօխը խոկոյն վեր կացաւ և հետեւ նորան: Յա չէր դնում, այլ խոկապէս թրաշում էր թեթէւ, անձայն քայլերով: Յա սիցէլ է ահա խոր քնի մէջ մտած քաղաքի մօսով, որ արգէն լուսաւորում էր արշալոյսի առաջին արգէն փայլում են բազմազան պատւզներով, որտեսցից անուշ հոտ էր բռնում:

—Այստեղ եկ առաց ձայնը: Թօխն զգաց որ ինքը մի աւազոտ գաշտում է զանուամ, բարձր պարսպով շրջապատուած:

Անկենպան և ամայի էր այդ ակզր: Թօխն խոկոյն համկացաւ, որ զանուամ է ժանախախանարների զերեզմանոցում: Ահա նա ահանում է ս որ զերեզմանոցի տանից ներս մտան չորս մարդ, որոնք խեթեանց ու սերի վերայ տանում են մի պատգարակ, որի վերայ ոև քողով ձածկուած մի ինչ որ բան էր նկատւում:

Հանգարտ քայլերով այդ մարդիկը մօ-  
տեցան նոր փոստած խոր փոսին:

— Ի՞՞նչ էք տանում. հարցը նորանց  
մօխը:

— Մեր եղբայր մօխի մարմինը, պա-  
տասխանեցին նոքա:

“ Նոցանից մէկը ազօթք կարդաց, ապա  
ըարձբացը պատկարակը գերեզմանի վե-  
րաց և գլուխեցին մարմինն այդ մուայլ դուքք:

Չայնը շարունակեց.

— Նայիր:

Մօխը նայեց գերեզմանի ներոք: “ Նորա  
առաջ բացուեց մի դարձութելի տեսարան.  
Ճածկոցը սողաց և մերկացը նուազած  
մարմինը, որ ճածկուած էր մոյզ ծիրանա-  
զոյն բժերով: Չատ տեղերում խոցերը ունա-  
ցել էին և նոցանից հոսում էր թիւնուոր  
թարախ:

Յանկարծ պատկարակ տանսղ մար-  
դիկը չքացան և ճայնն առաց նորան.

— Լովիր:

Եւ մօխը լոեց օդի մէջ հնչող ճայնը:  
Աւ բախացէք, ու բախացէք:

— Ո՞րուեղից և ո՞ւմ ճայնն է դա,  
հարցը նա:

— Ժանտախտահարների, լոռեց պա-

տասախանը: — Մեղ ծառայութիւն մատուցանող մարդու մարմինն այժմ յանձնած է հողին: Աւրախացէք ուրախացէք:

Ինչո՞ւ գուք այդպէս ուրախ էք, կրրկին հարցընեց նա: 2է<sup>o</sup> որ այդ մարդը մեռած է արդէն և նորա հոտած մարմինը որպերն են կրծուառմ:

— Սէրը յազմահարում է մահուան, կրկին լսուեց պատասխանը: — Այն ամենը, ինչ որ նիւթ է, մարմնաւոր է, կրկորչի, կոչնչանայ, միայն սէրն է, որ յաւիտեան կրմնայ: Աւրախացէք, ցնծացէք:

Թօխը յանկարծ զարթնեց: Դեռ գիշեր էր: Նորան ահարկու գերեզմանի պատերի նման պատել էին բարձր խաւարով ծածկուած ծառերը: Նա տեսնում էր իր հոգու մէջ և շուրջը մի լոյս միայն և կամացուկ մրմնջաց ինքն իրան:

— Շնորհակալ եմ քեզանից, Հայը, այս ըոլորի համար: Յիրաւի, այլ ևո չեմ վախենում մահուանից և չեմ սարսափում տանջանքներից: Քո ճշմարտութիւնը լուսաւուրեց ինձ:

## IX.

Նոր առաւօտը Թօխին առողջութիւն

տուեց, բայց նա գարձեալ տանջւում էր  
քաղցից: Այս օրին, եթե նա աչքերը փա-  
կած պառկած էր նուազած մարմնով, յան-  
կարծ լոեց ծառի չոր ճիւղերի խշխոց,  
կարծես թփերի մէջ մէկը թագնուած լի-  
նէր: Մի բոպէից յետոյ նորա վերայ բուռն  
յարձակումն դործեց մի գաղան և սկսեց  
թաթերով քաշքշել նորան:

Թօխը բացեց աչքերը և անսաւ իւր  
շանը—Գոտարին: Շունը թուշկոտում էր նո-  
րա շուրջը, լիզում նորա երեսը, ձեռները,  
ոտները և վերջապէս պառկելով նորա կրծքի  
մօտ, յառեց իւր խանգազալից աչքերը տի-  
րոջ երեսին:

Այսպէս անցաւ մի քանի ժամ: Շունը  
վեր կացաւ և սկսեց ման գալ տիրոջ շուր-  
ջը, հոտ քաշել նորանից և գետնից խոտ պո-  
կել: «Նա քաղցած էր: Աչինչ չգանելով այն-  
տեղ, մէկ անգամ ևո պտոյտ անելով Թօ-  
խի շուրջը, ցաւակցաբար նայեց նորա վե-  
րայ և ապա յանկարծ անյայտացաւ թփե-  
րի մէջ:

Թօխը ստոտիկ ուրախանալով այդ բա-  
նից լնքն իրան ասում էր. «Շտապի՞ր, ազ-  
նիւ գաղան, այնտեղ, որտեղ կկերակըն  
քեզ: Շնորհակալ եմ, որ լնձ մխիթարեցիր»:

Երկու ժամից յեայ հաւատարիմ կենացանին վերադարձաւ, բերանեամ բռնած ցուրենի հացի մի մեծ պատառ : Թօխն առանուրա բերանի հացը, կիսեց և ապա կէսը շաներ տալավ, կէսն էլ ինքը ճաշակեց, կրշացաւ և փառք տուեց Առողջուն : Ծունքը պառկեց նորա մօտ, նու զրկեց և փարեց շաներ և ապա երկու ոն էլ քննեցին խաղաղ քնով :

## X.

Այսպէս անցաւ չորս օր: Ամեն օր շունը զնում էր քաղաք և երեխյեան դէմ վերագասնում անառառ բերանին մի կտոր հաց, որն ստանում էր նու մի անյացտ ու ոզրմած մարդուց: Արդար Թօխը բաժանում էր նորա տուած հացը և հաւատար բաժին տալիս իր սիրելի շաներ:

Այսպէս մի առ ժամանակ ապրեցին նոքա անտառում հսկայ կաղնիները պատրապարում էին նոցա վերեկեց, իսկ երկնքի առաղեցն ուրախ խնդում նոցա երեսին:

Հինգերորդ օրը Թօխն արդէն այնքան ոյժ ունէր, որ կարող էր հասնել մինչև աղբերակը, որը հոսում էր փոքրիկ անտառում:

Նա այնտեղ իրեն համար վրան շինեց ծառի  
ճիւղերից և գիշերում էր մէջը շան հետ  
ի միասին։ Այսպէս էր անցկացնում նա իր  
օրերը և սիրում էր խորասու զուել սիրոյ  
օրէնքի մասին իր ունեցած բարեպաշտ մը-  
ածմաւնքների մէջ։

Եններորդ օրուայ լուսաբացին Ոօխր  
ասաց լնիքն իրեն։

— Փամանակն է արդէն և ոլէտք է նո-  
րից գնալ եղբայրներին մօտ։ Եմ մէջո այժմ՝  
այնքան ոյժ եմ զգում։ որ կարող եմ նորից  
դորժել յօկուտ հիւ անզների և չքաւորների։

Նա վերադարձաւ քաղաք։ Այդ օրը  
մեծ տօն էր այն մարդկանց համար, որոնք  
ճանաչում էին նորան։

## XI.

Եօթ շարաթ անցնելուց յետոյ Ոօխր  
ժողովեց իւր բոլոր բարեկամներին և ասաց։

— Սիրելի բարեկամներ, ես վճռել եմ  
և ոլէտք է անպատճառ վերադառնամ այն-  
տեղ, որտեղ ծնուել եմ լնիք։ Ամէն տեղ և  
ամէն բոպէ մարդու ազատ կարող է ծառա-  
յել Առածուն և մարդկանց։ Այստեղ, տես-  
նում եմ, մարդառէր մարդիկ շատ խնամում

ու մեզմացնում են մարդկային նեղութիւնն-  
ներն ու վշաերը: Կմ հայրենի քաղաքում  
մի ընդարձակ թաղ կայ, որտեղ ընակւում  
են ամենից մոռացուած հաղարաւոր մար-  
դիկ: Զրկուած լինելով հողից, այդ մարդիկն  
ապսում են հարուստներից և վաճառականն-  
ներից ոտացած իրենց օրական վարձով: Նու-  
ցանից շատերն ամիսներով գործ չեն ունե-  
նում և թափառում են քաղաքի փողոցներ-  
րում և ողորմութիւն խնդրում, իսկ ոմանք  
կտրում են մեծ ճանապարհները և տւագա-  
կութիւն ու մարդառապանութիւն անում:

Օրօրոցումն ինձ սպառնում էին նոցա  
անունները տալով: Կմ Ճնողների ոսկեզօծ  
կառքերն այդ քաղցի, սարսափի և մոլու-  
թեանց ընից միշտ հեռու էին փախչում: Մի  
անգամ՝ պատանի ժամանակո, հօրից ծա-  
ծուկ մեր քաղաքի այդ թաղը մտայ: Սար-  
սափեցայ ես, երբ նկատեցի քաղաքի այդ  
որջի մէջ վէրքերով ծածկուած քաղցած ու  
ծարաւ երեխանների մարմինները, իսկ նոցա  
մայրերը իրենց աղջիկների անմտութիւնը  
ծախում էին մի կտոր հացով:

«Այժմս հողիս ինձ այնտեղ է գրգում  
գնալուց որպէս զի կեանքս զոհ կարողա-  
նամ քերել այդ դժբաղդներին: Այս աշ-

խարհի բազգաւ որները կտրեցին նոցանից իմ սիրաք. իոկ նոցա դառն վիճակը բազոքում է Աստծուն»:

«Ահա հոգիս ինձ այնտեղ է քաշում: Առաջո են կանգնած կիսամերկ սառւերներ, հիւանդոտ կանայք և մանուկներ, դեպ ինձ են մեկնում նորա իրենց ցամաքած ձեռներն ու կանչում յետելից արցունքն աչք-ներին»:

«Ներեցէք, սիրելի եղբայրներո, ես վճռել եմ և հէնց վազն առաւօտեան ձեզանից հեռանալու եմ»:

Հատ տխրեցին Թօխի բարեկամները, սակայն չհամարձակուեցին ընդդիմանալ նորա հոգու թելագրութեանց:

## XII.

Միւս օրն առաւօտեան վաղ բազմաթիւ մարդիկ դուքս եկան Թօխին ճանապարհ դցելու: Հատնելալ մինչև քաղաքի գուռը, շատերը ներողութիւն խնդրեցին նորանից և վերադարձան իրենց գործին: Նոր մօտ մնացին միայն նորա անձնուէր բարեկամներից մի քանիոր: Այդադեղ էր նաև նորա հաւատարիմ շունը որ ուրախ

կերպով մօտենում էր բոլորին և լիզում  
նոցա ձեռներն առանց բացառութեան

Օրը սաստիկ տաք էր. բոլորը մտան  
անտառ փաքը ինչ շունչ առնելու այստեղ,  
որտեղ քիչ առաջ ապրել էր Ոօխը իր շան  
հետ. Բոլորը պառկեցին հանդարտ քւրեա-  
ցող աղբերակի մօտ. Ոօխն երկար և մտա-  
խոհ նացում էր իր բարեկամներին և վեր-  
ջապէս պարզ ժպիտն երեսին ասաց.

« Ահա հէնց այստեղ ես եղթայրաբար  
ապրում էի շանս հետ, որ և կերակրում  
« էր ինձ. Գաղաններ կան, որ գաղաններ են  
« լափում» մարդիկ կան, որ տանջում, սպա-  
« նում են մարդոց, բայց ատելութեան և  
« կործանման խաւարի մէջ վառվում է  
« մարդասիրութեան հրաշագործ լոյսը:

« Բոցերից բռնկւում է բոց, սիրոց  
« ձնւում է ոէր:

« Սիրոյ լուսով լուսաւորուած մարդը  
« փրկում է մարդուն և խրզճակացանին:

« Գաղանը փրկում է գաղանի կեանքը  
« և կարեկցում է մարդուն:

« Ե՞մ բարեկամներ ապէք սիրով,  
« Մարմնի սնունդի մասին հոգալիս, երեք  
« մի՛ մռանապք հոգեսրը խոկ հոգւոյ կերա-  
« կուրը — մարդու բարի գործերն են:

«Մայրելս, զութ ունեցէք ձեր որդւոց  
«վերաց սրբինեան այդ զութը կողմնապատ-  
«հութիւն չէ ճանաչում: Ձեր ընտանեաց  
«մասին մտածելիս միշտ ձեր հոգին բաց  
«պահէք ամեն մի տանջուղի համար:

«Եմ բարեկամներ, թող ամեն մի հի-  
«ւանդ, ասուապեալ մարդ, ապաստանա-  
«բան զանէ ձեր սրտի մօտ: Թող ամեն մի  
«անուռն պատապարան զանէ ձեր աանի-  
«քի տակ:

«Թէ՛ւ ձեզանից՝ ո՛չ բոլորից կարելի է  
«պահանջել, որ զոհէք ձեր անձը կորչաղնե-  
«րի վրկութեան համար, բայց իւրաքանչ-  
«չիւրին ձեզանից տուած է սիրոյ լոյսը,  
«որպէս զի նորանով լուսաւորել կարողա-  
«նաք այլոց:

«Մի ուեղ պարտաւոր էք վէրը կապել,  
«մի ուրիշ ուեղ մխիթարական խօսք ասել,  
«մի ուեղ հաց հասցնել քաղցածներին, մի  
«ուրիշ ուեղ սիրով յանդիմանել մարզուն  
«իւր կատարած մեղքի համար: Այս անե-  
«լուց յետոց մենք կտեսնենք, որ մէկին ա-  
«զատած կլինինք աանջանքից, մի ուրիշին  
«վհասան թիւնից, երբորդին քաղցից, մեղ-  
«քից և ուրիշ շատ բաներից: Այսպիսով  
«ձեր ամրողջ կեանքը կարող էք շարունակ

« մեծադորձութեանց ասպարէզ դասձնել  
կորչողների անձը փրկելու համար :

« Սիրելի բարեկամներ, եթէ մարդիկ  
« իրենց հողին ամբողջապէս նուիրեն դժու-  
« թեան վեհ գործին, այն ժամանակ սիրոյ  
« անշէջ հուրը կիվայլէ աշխարհի վերայ և  
« մարդկանց մէջ կթագաւորէ ճշմարտու-  
« թեան գաղափարը » .

Թօխը, իւր խօսքերը վերջացնելու ց յե-  
տոյ, վեր կացաւ և բարեկամներին հրա-  
ժեշտի ողջոյնը տալով, մեկնեց: « Նորան հե-  
տեղից իւր հաւատարիմ շունը: Քիչ հեռա-  
նալուց յետոյ Թօխը յետ նայեց: Յետ նա-  
յեցին և նորա որտակից բարեկամները:  
Թօխը բարձրածայն ասաց.

— Օրհնուած է ոէրը, օրհնուած է  
կեաները. որից յետոյ նու կրկին շարունակեց  
իւր ճանապարհը աւելի հեռու և շուտով  
անհետացաւ աշնանային կատաղի մրրկից  
ճանապարհին բարձրացած վոշտ ամպի մէջ:



## ԿՈՐԱԾ ԲԱՐԵԿԱՄՔ.

«Մարդու միայն իւր համար  
յի ապրում: Նա սեղծուած է  
ոչ քե մի միայն իւր օցի: այլիւ  
մերձաւորի օցի եւ բարուրեալ  
համար: Ա. Ամայլ:

«Կամենաւ եվ զույ մեծ յի-  
նել»: Տարցենում է Սուրբ Յօնո-  
սինս, —ուրիշն առաջ փոփր  
հղի:

ՄԵ ԶԲՈՅՑ ՏԱՃԿԱԿԱՆ ԿԵՎԱԳԻՑ,

## ՊԱՐԴՊՈՅՑԼՓ ԼԻՇՊԱՋԻՓ.

Տաճկական մի քանի տառեաններում  
ընդունվում են աստիճանաւոր դառնալու  
ցանիկութիւն ունեցող ազնուական ծագու-  
մալ երիտասարդներ. պաշտօնեանեց պատ-

բաստող այդ գործոցն ունի եռամսեաց գարնթաց, ուսմիկ չի արւում, բայց և աշխատանքը ծանր չէ:

Այդպիսի զիս անուանելից (Վալիճ) մէկում մի առաջ օտ երկու երիտասարդ իրար հանդիպեցին:

— Սիրելիկ իմ Ռամիկ, բացականչեց նույնից մէկը:

— Քարի Եկար, սիրելի Ապրդ, տասց երկըուզը, ի՞նչպէս ես:

Երեւամ էր որ ուրախութիւնից երկուսն էլ յուզուած էին, սակայն նոցա ողջայններն արտացայտուեցան խիստ ցած ձայնով, քանի որ այդպէս է վայելու համարւում տաճկական կրթուած շրջանում, այնպես որ ներկայ եղողները հաղիւ թէ լսութինէին նոցա խօսքերը: Ռամիկը և Ապրդը նուեցին լուսամուտներից մէկի մօտ զրուած բազմոցի վերայ և սկսեցին ցած ձայնով — բայց կենդանի խօսակցութիւն:

— Ես անչափ ուրախ եմ քեզ նորից տեսնելու ո համար, սիրելի Ռամիկ: Ի՞նչպէս ես, զուս գալի՞ս է քեզ Սատամբուլը, արդեօք յիշում էիր հայրենիքդ ու քո բարեկամդ:

— Լաւ եմ ապրում, Ապրդ, և Ստամբուլն ինձ շատ է զուս է գալիս, բայց հայ-

ըենիքս ի՞նչպէս կալող էի մոռանոլ։ Ըստ  
անդամ մասրեսում էի քեզ և ցանկանում,  
որ զու շաւագի առողջանայիթ այն շարա-  
տանց հիւանդութիւնից, որ շպմայել էր  
քեզ անկազնում, մեր հեռանալու ժամա-  
նակ։ Այժմ ի՞նչպէս է առողջութիւնդ։  
Դու էլի զալկացած եօ երեւում, թէե միեւ-  
նոյն ժամանակ և ուրախ։

— Փառք Ալլահին, այժմ առողջ եմ։  
Արքան ուրախ եմ, որ կրկին քեզ պատա-  
հեց։ Այժմ ոչ մի բան չի բաժանել մեզ։  
Ահ, Ռայիթ, Արքան ուրախ եմ քեզ տեսնե-  
լու համար։

Թէ՛ Սադրդ ըէյը և թէ՛ Ռայիթ ըէյը  
ծագմամբ Փոքը Ասիացի էին և հարեւու։  
Վազ հասակից սկսած, երբ նոքա դաստիա-  
րակւում էին դեռ հարեմում կանանց հըս-  
կադութեան առկ, նոքա խաղում էին միա-  
սին և ապա մինչեւ 16 տարին փոխազար-  
ձարար նոքա բաժանում էին իւրանց երեւ-  
խայական և երիտասարդական հասակի ու-  
ստիութիւններն ու վշտերը, թէե ոչ նոյն  
անկեղծութեամբ, որտեղ, թէե տանջուողը  
Սադրդն էր, բայց և այնպէս երբէք չէր  
դանդաւում իւր վիճակից և երբէք կա-  
րեկցութեան արժանի չէր դանում։ Բարե-

սիրտ և աղնիս Սադրզը այն առաջինան ուշ  
ըստ էր Թայիֆին, որ իւր լոլոր աւնեցա-  
ծը սիրով և յօժարութեամբ կտար իւր բա-  
րեկամին, իսկ շահասէր և իշխանատէր Թայի-  
ֆը Սադրզի սէրը ընդունում էր՝ պահելով  
նրա հետ սառն բարեկամական յարաքե-  
րութիւնն: Սադրզը չէր նկատում այդ ան-  
հաւասարութիւնը: Նա զգում էր, որ ին-  
քը կապուած է Թայիֆի հետ բարեկամա-  
կան սերտ կապելով, և երբէք մտքիցն էլ  
չէր անցնում, որ Թայիֆը կարող է չտածել  
դէպ ինքը այն զգացմունքները, ինչ զգաց-  
մունքներ ինքը ունի դէպի նա:

Սադրզ բէյը և Թայիֆ բէյը երկուսն  
էլ զեղեցկադէմ և առոյդ պատանիներ էին  
և ծագում էին հին նշանաւոր ընտանիքնե-  
րից. Սադրզ բէյը հին Գերեբէյեան «հող-  
տական իշխանների» ցեղից՝ Զափանօղլու որ-  
դին էր, իսկ Թայիֆ բէյը Հուսէյն բէյի  
ուղին՝ Երբեմն հզօր և հարուստ Սալարտա-  
լի ցեղից, թէե ոչ մէկն էլ նոցանից չկա-  
րողացաւ հարստի հոչակ հանել: Անկատած  
Սադրզը իւր կալուածատէր հօր շաւզով կըն-  
թանար և իւր կեանքը կանցկացնէր այն կա-  
լուածքի մէջ, որտեղ ծնուել էր, եթէ նո-  
րա սիրելի Թայիֆը չներշնչէր նորան նորնոր

մաքեր: Աերջինս, երբ դեռ տասներկու  
տարեկան երեխայ էր, հաղորդեց յափոշ-  
տակուած Սագըզին, թէ իւր կրթութիւնը  
վերջանալուն պէս, կդնայ Ստամբօլ, որով-  
հետեւ գիտաւորութիւն ունի հզօր և հա-  
րուստ մարդ գառնալու: Այդ խօսքերին  
Սագըզը իսկոյն պատասխանեց, որ ինքն ևս  
կդնայ Ստամբօլ և կաշխատէ նոյնպէս այն-  
տեղ ձեռք բերել իշխանութիւն, հարս-  
տութիւն:

Սագըզին և Ռայիֆին դաստիարակող  
ուսուցիչների թւումն Զափան օղլու տանի  
էր միւնայն ժամանակ և ֆրանսերէնի մի  
ուսուցիչ, որը նախքան Փոքր Ասիա դալը  
Ստամբօլում մի բարձրաստիճան տաճկի որ-  
դու ֆրանսերէն գասեր էր տալիս: Այդ  
բարձր աստիճանաւորը Զափան օղլու հին  
բարեկամներից էր, որի յանձնարարութեամբ  
և Ահմէդ էֆէնդին նշանակուեց Սագըզին  
ուսուցիչ: Դա շատ պատուաւոր և կըթ-  
ուած մարդ էր: Կարճ ժամանակուայ մէջ  
մտերմացաւ իւր հնագանդ աշակերտի հետ,  
ուրախութեամբ խօսակցում էր նորա հետ  
և սպատառխանում էր մինչեւ անդամ նորա  
այն հարցերին ևս, որոնք ընտանիքին վերա-  
բերում ֆրանսերէն լեզուին:

Ահա այդ Ահմէդ Էֆէնդուց Սաղըղը  
իմացաւ յառաջագիմելու ամենից ուղիղ  
և ճշմարիտ ճանապարհը։ Այդ ճանապար-  
հը ուս կոխելու համար, անհրաժեշտ է ք  
բարձրագոյն Քուան զալեմներից \* մէկում  
տեղ գտնել։ Սագրդի համար, շնորհիւ այն  
բարձրաստիճան մարդու, որի մօտ ծառա-  
ցել էր Ահմէդ Էֆէնդին, գժուարութիւն-  
ներ չեր լինի հասնելու այդ նպաստին,  
իսկ Ալլահի օգնութեամբ նա աւելի առաջ  
գնաց, նրան մնում էր միայն երկիւ զած լի-  
նել, որից աւելի ոչինչ չեր պահանջում ին-  
քը Ահմէդ Էֆէնդին. իսկ «բարեպաշտ լի-  
նել», ըստ մարդարէի վարդապետութեան,  
նշանակում է անդադար աշխատել իւրաց-  
նելու իւր մէջ աղամարդու ըոլոր շնորհալի  
յատկութիւնները, այն է՝ հաւատարմու-  
թիւն, քաջութիւն, ճշմարասիրութիւն,  
ողորմածութիւն և մարմնակուն ու հոգե-  
կան մաքրութիւն։

—Ես այսուհետեւ կաշխատեմ բարե-  
պաշտ լինել, Էֆէնդի, առաց փոքրիկ Սա-  
ղըղը. —վստահ եղեք ինձ վերայ։

Դասերից աղամառելուն պէս՝ իսկոյն

\* Գաւարան։

շտապեց Ռայիփի մօռ և պատմեց նորան  
այն ամենը, ինչ որ իմացել էր Ահմէդ է-  
ֆէնդուց:

— Սպարտատնեսի ցեղը պակաս ազնիւ  
չեն Դերերէ յներից, հազարտութեամբ նկա-  
տեց Ռայիփը Սաղըզի խօսքերը ու շաղըու-  
թեամբ լսելուց յետոյ—ես ել նոյնքան յա-  
ռաջ կզնամ, ինչպէս և դու:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց Սաղըզը,  
ես ուրիշ կերպ չէի ել կամենայ: Ինձ համար  
սարսափելի է մասձել, որ երբեկից իրա-  
ւո՞նք կունենամ քեզ հրամայելու:

— Եհարկէ այդպիսի բան երբէք չի մի-  
նի, բարկացած բացականչեց Ռայիփը:

Սարսափած Սաղըզը մի քայլ յետ գր-  
նաց, բայց խելոյն նորից մօռեցաւ իւր բա-  
րեկամին:

— Դու ինձ վերայ չպէտք է բարկա-  
նաս, եթէ ես քեզ վշտացրի, առայ նո  
բարեկամաբար: Ես քեզ վերաւորելու մաքով  
չառացի այդ:

Ռայիփը ոչինչ չպատասխանեց և, ինչ-  
պէս երեսում էր, նորա այդ բապէտկան զայ-  
րոյթը, ըստ երեսյթին, յաւ խենան մարեց:  
Ճանապարհին, առւն վերադառնալիս, Սա-  
ղըզը մտաբերեց գէպքը և չարաշար նա-

խատում էր իրեն, իւր բարեկամին անպատճելուն համար:

Նորա արդէն 17 տարեկան էին, երբ մէկ անգամ Զափան օղլու մօտ եկաւ նորա բարեկամ Հուսէյն բէյը՝ Թայթիֆի հայրը. նա յայտնեց, որ Թայթիֆը ցանկանում է աստիճանաւոր դառնալ և խնդրում է միջնորդել Բարձրագոյն Թքան դալեմներից մէկում ընդունել տալու համար:

Մեծաւ ուրախութեամք կը կատարէի, չարունակեց Հուսէյն բէյը, բայց երեսուն տարուց աւելի է, որ ես Ստամբուլում չեմ եղել և խելապէս չգիտեմ ում գիմել գորա համար. Եսկ դու, եթէ չեմ սխալում, նաև խարարութեանց մէջ հին բարեկամներ ունիս: 2ի<sup>o</sup> կարելի արդեօք ձեզանից խնդրել, որ նոցանից մէկն ու մէկին ներկայացնէք Թայթիֆին:

—Մեծաւ ուրախութեամք, պատասխանեց Զափան օղլին: Հէնց այսօր ես կդրեմ Եղիտտա - Մուլլին, որ Ստամբուլի բարձրագոյն ատեանի նախադանն է:

Հուսէյն - բէյը հեռացաւ: Զափան օղլին խելոյն և եթ կանչել առեց Ստորգին, որպէս զի Եղիտտա Մուլլին խոստացած նամակը նքան գրել առայ: Ենքը ծերունին

երկոր տարիների ընթացքում շատ քիչ անգամ է զբիչ վեր առել. Նորս համար մի որ և է շատ կամ քիչ երկար նամակ դրեւը խիստ դժուարին դործ էր: Ընդհակառակը, Սաղըղը այդ գործում մեծ հմտութիւն էր ցոյց տալիս և շատ անդամ հօր մօտ քարտուղարի պաշաճն էր կատարում: Խզիտատ Մուլին նամակ դրելու հրամանը լսելուց յետոյ, նա յարդանօք գլուխ տուեց և ցած ձայնով ասաց

— Դուք ինձ երջանեկացրած կլինելիք սիրելի հայրիկ, եթէ որ թոյլ տայիք նամակի մէջ Ուայեֆի անունից յետոյ դնել և իմ անունը և ինձ համար ևս խնդրել նոյն շնորհը, ինչ որ խնդրելու էք Ուայեֆի համար: 2է՞ որ ես ևս կամենում եմ, որ ձեր ողորմած թոյլտութեան շնորհիւ աստիճանաւոր դառնալ և ինձ համար առելի ցանկալի էր այդ ճանապարհի վերայ ոտ կոխել բարեկամիս հետ, որտեղ յոյս ունիմ, որ պատիւ կըերեմ իմ ծնողներին:

Զավիան օղլին ամենենին չգարմացու այդ խնդիրը լսելով, Փամանակ առ ժամանակ Սաղըղի գէմքի վերայ երկչութեան նշաններ էին երեսում, որոնցից հայրը հասկանում էր, որ որդին ուզում է բաղդ որո-

ՆԵԼ Ստամբօլում։ Զափան օղլին գորան հա-  
կառակ ոչինչ չունել։ Սադըզը նրա չորսորդ  
զաւակն էր։ Քանի որ նորա երեք մեծ եղ-  
բայրները կամովին գիւղումն են մնում։  
որեմն նորա ընտանիքը առանց Աադըզի  
էլ բաւական թուով ներկայացուցիչներ ունի  
Փոքր Ասիայում։ —Թող լինի այնպէս, ինչ-  
պէս ինքդ ես կամենում, —առաց Զափան  
օղլին։ —Թող Ալլահը քո այդ ձեռնարկու-  
թեանը յաջողութիւն տայ։ Իմ օրհնութիւ-  
նը կառաջնորդէ քեզ Ստամբօլում։

Երեք շաբաթից յետոյ պատասխան  
եկաւ Դվիտաս Մուլլից, որ տռաջարկում էր  
Ռայիֆին և Սադըզին որչափ կարելի է շու-  
տով Սաամբօլ երթալ և իրեն ներկայանալ։  
Խոստանում է անձամբ տանել նոցա Բարձր  
Դուռը, որտեղ նոցա ընդունելութիւնը ար-  
դէն ապահովուած է։

Բայց նախքան այդ պատասխանի  
գալը Սադըզը տկարացաւ և անկողին մտաւ։  
Նա խիստ տենդի մէջ էր։ Հուսուէյն-Բէյը  
երաշխաւորուելով Զափան օղլու համաձայ-  
նութեան վերայ, վճռեց մենակ թողնել  
Ռայիֆին գնալու Կ. Պոլիս։ Երեք շաբաթից  
յետոյ միայն Աադըզն իմացաւ տյդ բանը։  
Երբ քիչ առաջացաւ, նա յաճախ հարցնում

էր Թայիփ ըեցի մասին և բուռն կերպով  
ցանկանում էր տեսնուելու բարեկամի հետ:  
Նորան հանգստացնելու համար, հայրը տ-  
սում էր: որ Թայիփը գնացել է Պուխո քեղ  
և իւր համար մի ընակարան վարձելու:

—Այդ մեծ շնորհ է նորա կողմից,—  
նկատեց Սագըզը,—այ քեզ ճշմարիտ բարե-  
կամ:

Հիւանդը տմեն կերպ աշխատում էր  
շոտ վեր կենալ: Ամենաբարեխեխղճ կերպով  
նու կատարում էր բժշկի պատուէրները:  
բայց տենդը կարծես բժշկական գիտութիւ-  
նից և հիւանդի բարի մատդրութիւնից առեւ-  
լի զօրաւոր էր: Այսպէս անցան մի քանի  
ամիսներ և Զափիան օղլին միանդամայն որ-  
դու առողջանալու մասին իր յոյսը կարեց:  
Իսկ վերջինու այն առտիճան թուլացել էր:  
որ այլ ես անկարսղ էր մատձել իր նպատակ-  
ների կատարման մասին: Յանկարծ միան-  
դամայն անսովասելի կերպով հիւանդի գրու-  
թիւնը գեղի լաւը փոխուեց, որ թէե գան-  
դաղ բայց յամառութեամբ շարունակուեց  
մինչեւ հիւանդի կատարելուպէս առողջա-  
նալը:

Երկու ամսից յետոյ Սագըզը այնքան  
կաղդութուեց, որ արդէն կարող էր ճանա-

պարհ ընկնել գէսլ Ստամբօլ, Կախ քան ճառ-  
նապարհ ընկնելը նա դնաց հրաժեշտի ողջոյն  
տալու Հուստէյն-բէյին, այլ և իմանալու,  
թէ որ և իցէ յանձնաբարութիւն չունի  
Ռայիֆին:

— Բարեիր իմ կողմից նրան, — ասաց  
Սպարտակի ծերունին, — թող նա որբու-  
թեամբ յիշէ այն խրատները, որոնցով բարի  
մայրը նրան ճանապարհ դրեց, Այս ասաց  
և նրան տուեց մի փոքրիկ մետաքսեայ քսակ՝  
առելով — այս էլ տուք նորան և տուս, որ  
մայրդ է ընծայել քեզ, Ռայիֆը այդ տեսնե-  
լով կուրախանաց, որովհետեւ փոքր հասակից  
ոկտած սիրում էր ոսկի, Խոկ գու, Սագըզ,  
եղիր տղնիւ և համեստ, ինչ գործի մէջ էլ  
որ լինիս, միշտ յիշիր նախնիքներիդ փառքը,  
հօրդ պատիւը և մօրդ ոէրը:

— Բոլորը այնպէս կլինի, ինչպէս որ  
դուք էք հրամայում և ինչպէս որ Ալլահը  
յաջողէ, խոր գլուխ տալով պատասխանեց  
Սագըզը, — միայն ասացէք խնդրեմ, Ստամ-  
բօլում որտեղ կարելի է գտնել Ռայիֆին:

— Չեմ կարող ճիշտը տսել, թէ նա  
այժմս ո՞րտեղ է ապրում, թախծալի գէմ-  
քով պատասխանեց Հուստէյն-բէյը, Խոր  
վերջին նոմակում նա դանդատում էր,

որ իւր ընակարտնը Բարձր Դունից շատ հեռու է, այդ պատճառով մտազիր է վարձել մի այլ ընակարան։ Ահա այն ժամանակունից ես իմ նամակները ուղարկում եմ նրան Եղիտտա Մուլի միջոցով։ Նա քեզցոյց կտայ Ռայիֆի տեղը։

Գալով Ստամբուլ, Սագրդը իսկոյն գնաց իւր հօր ըարեկամի՝ ըարձրագոյն ատեանի նախագահի մօտ։ Դորանից տեղեկացաւ, որ ինքն ես պէտք է աշխատէ նոյն զալեմում, որտեղ այժմս պարապում է Ռայիֆը։ Բաւական էր որ սովորական զբաղմունքներից քիչ առաջ Սագրդը ներկայանալ Բարձրագոյն Պրան դիւտնատան կառավարիչ Սայիդ էֆէնդուն, որտեղ իսկոյն կտեսնուէր Ռայիֆի հետ։ Այդպէս էլ պատահեց։ Դեռ նոր էին Սագրդ բէյը և Սայիդ էֆէնդին իրար սղջունել և Սագրդը դեռ նոր էր ստացել Կալեմում այս ինչ տեղը ըռնելու համար պատռէր, երբ յանկարծ Ռայիֆը ներս մտաւ ոենեակ, որտեղ և տեղի ունեցաւ նոցա սրտագին տեսակցութիւնը։

Սագրդը նկատեց, որ իւր ըարեկամը խիստ փոխուել է դէպի լաւը, որ ըաժանուելուց յետոյ մի տարուայ ընթացքում նա բաւականաշատի մեծացել է, գեղեցկա-

յել և ձեռք է ըերել վայելու կազմուածք  
և գիրք պահելու հմտութիւն։ Նա կըում էր  
ըստ կապոյա և բարակ մահուախց կապոյ,  
մէջքին կապել էր փայլուն դօտի և գլխին  
դըել էր գեղեցիկ ծալքերով յարմարեցրած  
զարդարուն չալմա։ Սազբզբ, որ իւր աշ-  
քերը երբեք չէր հեռացնում Ռայեֆից, այս  
բոլորը չէր նկատի, եթէ որ Ռայեֆը նըո-  
տելուց անմիջապէս յետոյ նորանից իսկոյն  
չհարցնէր.

—Քո այս հագուստը վատ չէր գիւղի  
համար, ըստց Ստամբոլում նա անյարմար է։  
Քայց ես կհոգամ այդ բոլոր անհրաժեշտ  
բաների համար և յուսով եմ, որ հայրդ  
տուած կլինի քեզ բաւականաչափ փող  
այստեղ յարմարապէս ապրելու համար։

—Ամեն բան հայրս նախատեսել և բա-  
ւականաչափ փող էլ տուել է, պատասխանեց  
Սազբզբ։

‘Նա իսկոյն յիշեց, որ Հուսոելին սէցի  
Ռայեֆի համար ուղարկած ընծան իւր մօտ  
է։ իսկոյն հանեց և տուեց նորան։’

Ռայեֆը, ըստ երեսյթին, անհոգու-  
թեամբ կշռեց քսակը սպիտակ գղուած  
ձեռքի վերայ և կոխեց գոտիի տուել։

—Այժմեան իմ ընակարանը մեզ եր-

կուսիս համար քեզ նեղ է, շարունակեց  
Ռայիֆը: Ես հենց այժմեանից կփնտրեմ մի  
ուրիշը:

—Աերջապէս կատարում է իմ վա-  
ղուցուայ քեզ հետ ապրելու ցանկութիւնը  
բացականչեց Սագըզը: —Ես երբէք չէի կա-  
րող յուսալ: Ո՞հ, ո՞քան ուրախ եմ այժմու:

—Այդ ինքն ըստ ինքեան ենթադրում  
է, նկատեց Ռայիֆը, իմ այսաեղի բարեկամ-  
ները արդէն գիտեն: որ մենք միտոին ենք  
ապրելու: Քո անունը արդէն նոցա ծանօթ  
է և այժմ նոքա ուրախ կլինին անձամբ ծա-  
նօթանալու քեզ հետ: Ես շատերի հետ խօ-  
սել եմ քո մասին:

—Ո՞հ, դու իմ բարեկամն ես, զգա-  
ցուած ասաց Սագըզը: —Ճնորհակալ եմ քե-  
զանից:

Այդ օրուանից ոկտած մինչեւ երկու  
տարի Սագըզը և Ռայիֆը համարեա անրա-  
ժան էին: Սագըզը կատարելապէս բազզա-  
ռոր էր զգում իրան իւր բարեկամի մօտ,  
բայց չնորհիւ իւր որտի բարութեանց նա  
երբէք չնկատեց էլ: թէ ինչպէս իւր զերքը  
աստիճանաբար ստորացաւ Ռայիֆի առաջ:  
Այլոց առաջ այդ զրութիւնը զգուշաբար-  
թագնուում էր: նոցա համար Սագըզը ա ~

ուաջուայ պէս նոյն նշանաւոր երիտասարդն  
էր և ճշմարիտ որ նորա վեհ պատկերին ազ-  
նիւ դէմքի և մեծ, լուրջ, քնքոյց և գեղեց-  
կատեսիլ աչքերի մէջ մի ինչ որ իշխանական  
բան էր նկատում: Նա ամբողջ զալեմի  
ոիրելին էր, թէև չէր կարող Թայիֆի նման  
ուշիմ գործիչի և ընդունակ, ջերմեռուանդ  
ծառայողի համբաւ վաստակել:

Անցան երեք ամբողջ ուսումնական  
տարիներ և Թայիֆը իւր եռանգուն ծառա-  
յութեան համար ստացաւ արժանաւոր վար-  
ձատրութիւն: Նա շատ անգամ իւր մեծին  
յայտնում էր, թէ ցանկանում է ելեմտից  
նախարարութեան մէջ պաշտօն ստանալ, որ  
և ստացաւ, թէև աննշան վարձարսու-  
թեամբ, բայց այնու ամենայնիւ տալիս էր  
Թայիֆին այն առաւելութիւնները, որ նա  
ստէպ ներկայանում էր այնպիսի բարձր անձ-  
նաւորութեան, ինչպիսին էր պարոն նախա-  
րար: Վերջինիս ուշադրութիւնը Թայիֆը  
կարողացաւ իւր վերայ դարձնել նախ և  
առաջ իւր վայելուչ արտաքինով և վեհ շար-  
ժումներով: Կարճ ժամանակուայ ընթաց-  
քում նախարարը նկատեց, որ այդ գեղեցիկ  
երիտասարդը նաև խիստ հաւատարիմ, դոր-  
ծադիր և ժիր մարդ է, ուստի քիչ-քիչ նա

սկսեց Ուայիթին այնպիսի դործեր յանձնել, որինք նորա անմիջական պարտականութիւնը ներից դուրս էին: իսկ Ուայիթ ըէյլ իւր կողմից այնպիսի ըմբռնողութիւն և ընդարձակ դործնական հմտութիւն էր ցոյց տալիս: որ վերջապէս նախարարը բացարձակ կերպով յայնեց, որ նախարարութեան մէջ ամենաըլու ծառայողն է Ուայիթը և իսկոյն հրաման արձակեց նրան փոխագրել աւելի բարձր պաշտօնի:

Ուայիթն արտաքուստ մեծ համեստութեամբ այդպիսի բարձրութեան հասաւ, բայց իւր այդ յառաջադիմութեամբ նուաւելի ևս սկսեց հպարտանալ Սադրդի առաջ, որը, երբ Ուայիթը իրա համար անուն էր վաստակում, հսնդարտ կերպով շարունակում էր եռանդ ցոյց տալ զալեմի թեթե, աննկատելի և անվճար ծառայութեան մէջ: Եթէ Ուայիթը կամենում էր իւր բարեկամի նախանձը դրդուել և այդ նպատակաւ իւր առաւելութիւնները չափազանցնում էր՝ իրեն համարելով նախարարի աջ ձեռքը և մինչև անդամ արհամարհանքով խօսելով վերջնիս մասին, այդ բոլորը ասում էր նրա համար, որովհետեւ նու Սադրդի բարութեան մասին ոչ մի դաղափար չունէր:

Ենքը Սագրզը երբէք ուստ չէր խօսում, այդ պատճառով էլ նորա մաքալին անդամ չէր կարող անց կենալ, որ Թայիփը կարող է գիտութեամբ չափազանցնել և ուստ խօսուել: Կա իր բարեկամի բոլոր առաջներին հաւատում էր այնպէս ինչպէս զուրանի խօսքերին և նորա բարութիւն արտայացող աշքերը փայլում էին բերկըութեամբ և ցըսծութեամբ Թայիփի փառաւոր յառաջադիմութեանց մասին պատմելիս:

—ԱՇ, Թայիփ, թող Ալլահը քեզ երկար կեանք պարզեցէ, որսէս զի կարողանաս ամենաբարձր պաշտօնների համնել:

Թայիփ ըէյը քաղցրաբար ժպտաց իրմէ պատասխան իրեն երկրագործող բարեկամի խօսքերին:

—Ինչպէս երեւում է, ասաց Կա, զու ինձնից աւելի վաղ եկար այն եղրակացութեան, որ Սոլարալները վատ չեն Պերերէյներից:

—Ես չեմ հասկանում, թէ ինչ ես ուզում ասել, զարմանքով նայեց նորա վերայ Ուագրզը:

—Ի՞նչ, զու ինձ չե՞ս հասկանում, հանդարտ կը ինեց իւր հարցումը Թայիփը մի առանձին ինքնավտահութեամբ: Դու, ինչ-

պէս երեսոմ է, մառացե՞լ ես այն ոպառ-  
նալիքները, որ իրսե Պերերէյ պէտք է ինձ  
հաջնէիր ամենաբարձր պաշտօնների հաս-  
նելուցդ յետոյ:

Ա՛յ, պատասխանեց Սաղբղը, ես չեմ  
յիշում, թէ երբ և իցէ այդպիսի բան ասած  
կամ նոյն իսկ մասձած լինիմ:

Ե՛հ, այդ թողնենք, աւրիշ ըանի մա-  
սին խօսենք:

Սաղբղը հաւատավով նրան, նոյն իսկ  
մառացու այս դէպքը:

Մի քանի ժամանակից յետոյ Սաղբղն  
ևս Բարձրագոյն Պռան զալէմը թողեց: Նորա  
այնտեղի ըոլոր ծանօթները բարեմաղթու-  
թիւններով ճանապարհ դրին: Նա համեստ  
պաշտօն ոտաննձնեց բարեգործական հիմ-  
նարկութեանց նախարարութեան մէջ:

Անցան երեք տարիներ, Սաղբղը կա-  
մաց էր իր համար ճանապարհ բաց անում,  
առանց սպասելու և առանց ձեռք ըերելու  
մի որ և է առանձին բարձր կոչում: Այն  
ինչ Ուայիֆը արդէն ելեմախց նախարարու-  
թեան մէջ ազգեցիկ պաշտօննեաներից մէկն  
էր համարւում:

Մէկ անդամ Ուայիֆը իւր բարեկամ  
Սաղբղին հիասթափեցրեց՝ յայտնելով, որ

շուտով ստիպուած պէտք է լինեն նոքա  
միմեանցից բաժանուելու, բանի որ նոքը  
մտադիր է ամուսնանոլու: Նոցանից իւրա-  
քանչիւնն արզէն քսան և եթեք տորեկոն  
իւր այնպէս որ մասամբ անց էին կացրել  
այն հասակը եսը սովորաբար թուքերը  
ամուսնանում են: Արցիֆի ասածի մէջ իու-  
կապէս զարմանալու ոչինչ չկար, բայց Առ-  
դրզը կարձես կայծակնահար եղաւ:

— Դու ուզում ես լին թողնել հար-  
ցրեց նա տխուր կերպով բայց ի՞նչ կլինի  
այն ժամանակ իմ գրութիւնը:

Արցիֆը նայեց նորա վերայց զլու խը  
շարժեց և ապա ծիծաղեց:

— Ի՞նչ զուարձախօս մարդ ես, Առ-  
դրզ: Մի՞թէ մենք մինչեւ մեր կեանքի վերջը  
ազատ ենք մնալու: Ես ոսոշել եմ այժմ  
ամուսնանալ, նոյնը կանես ի հարկէ յետոյ  
և զու: Այդ է ընդհանուրի վիճակը:

— Այո՛, ես աս կամենում եմ ամուս-  
նանալ:

— Եւ զու նայում ես զորա վերայ-  
իրեն գժբաղդութեան:

— Ո՛չ, ես երեք դորա, ոսպէս ան-  
բաղդութեան վերայ չեմ նայել, որով-  
հետեւ այդ իւրաքանչիւր մուսու լմանի պար-

աւականութեանն է: Արիայն ցաւ ալին այն է, որ մենք պէտք է շաժանուենք: Ես անօպատաստ եմ մի այդպիսի վիշտ ասնել:

—Ա՛չ սիրելի Սագրզ մենք չենք բաժանուի միմեանցից, սիրալիս կերպով առայ Թայիֆը: —Մենք դարձեալ բարեկամիմնանք:

—Այո՛, ինձես պէտքէ ամուսնանալ, անուշտղիս կերպով կըկնեց Սագրզը:

Հետեւեալ օրը Թայիֆը առաջարկեց իւր բարեկամին կատարել մի փաքրիկ զքօսանք: Տարաւ նորան Ծահ-Զագեյի եշխանական քաղաքամասի մի խուլ փողոց և կանգնեցրեց մի գեղեցիկ նոր և ըստ երեսյթին, գեռ անմարդաբնակ տնակի տուած:

—Քեզ դուք դալիս է այս զննաղը, հարցըց Թայիֆը:

—Հիանալի է, անտարբես կերպով պատասխանեց Սագրզը:

—Աւախ եմ, որ քեզ դուք է դալիս շաբունակեց Թայիֆը, որովհետեւ, կարծում եմ, որ մենք միասնին նրանում շատ քաղցր ժամեր պէտք է անցկացնենք:

—Ի՞նչպէս:

—Սա իմ զննաղն է: Ես մօտ օքերո եմ գ'տել և յոց տնեմ, որ շտառվ այսուեղ կուղափոխուեմ կնոջ հետ միասն:

— Մի՞թէ այդպէս շուտով է լինելու  
քո հարսանիքը, հարցը Սաղըզը: Եւ մի՞թէ  
արդէն հարսնացու ընտրել ես:

Այս, ես արդէն ինձ համար հարսնա-  
ցու ընտրել եմ:

Եւ դու ինձ ոչինչ չես առել այդ մա-  
սին . . . ո՞հ, Ուայիֆ . . .

— Ես սովորութիւն չունեմ ժամանա-  
կից առաջ խօսել մի որ և է բանի մասին,  
առաց Ուայիֆը: Ըստ ամենը երեք օր է, որ  
Հաջի-Էշրէֆ ըէցը յայտնել է իւր համաձայ-  
նութիւնը իր Այրէ անունով երկրորդ աղ-  
ջիկն ինձ տալու:

— Եթէ չեմ սխալում, ընդհատեց Սաղըզը:  
Հաջի-Էշրէֆ ըէցի մեծ գուստը  
ամուսնացած է քո մեծաւորի որդու Մու-  
րատ ըէցի հետ:

— Այս պատասխանեց Ուայիֆը:

Մի քանի օրից յետոյ տեղի ունեցաւ  
Ուայիֆ ըէցի և Այրէ խանումի հարսանիքը:  
Տարածուած լուրերից երեսում էր, որ հարս-  
նացուն գեղեցիկ էր. առում էին նոյնպէս,  
որ յարդելի վաճառական Հաջի-Էշրէֆ ըէցը  
մեծ օժիտ է տալի իւր աղջկան, ի միջի այ-  
լոց նա ընծայել է երիտասարդ զոյզին մի  
գեղեցիկ զննազ, որը տեղեակ մարդիկ գը-

Նահատում էին ոչ պակաս քան երկու հաւ-  
թեւք ֆունտ ոսկի։ Թայիփն առել էր Սադր-  
զին, որ իրը ինքը գնել է այդ զոնազը։ Սա-  
դրզը խոկոյն յիշեց նորա խօսքերը, բայց  
չլսած ձեւացրեց։ Անտոելի տիսրութեան մէջ  
նա հարսանիքի օրուայ երեկոյեան վերա-  
դարձաւ իւր բնակարանը, որտեղ աւելի  
կենդանի կերպով պատկերացաւ նորա մտքի  
մէջ իւր կորած բարեկամը — Թայիփը։ Առա-  
ւոտեան, նախ քան պաշտօնի դնալը, նա  
ուղևորուեց ստրուկների հրապարակը, խօ-  
սեց այնտեղ մի կին վաճառականի հետ,  
որի մասին լաւ էր լսել և շատ շաւտով հա-  
մաձայնութիւն կայացրեց նորա հետ։ Նորա  
պայմանն այն էր, որ նշանադրուած օրի-  
որդը լինէր գեղեցիկ, ջահիլ, սպիտակա-  
դէմ և բնաւորութեամբ աղնիւ։ Պատա-  
կին վաճառականը հարցըց Սադրզի անուն  
և ազգանունը, յուսագրելով։ որ մօտ օ-  
քերս կարող կլինի բաւականութիւն տալ  
նորա ցանկութեանը։ Գործը յաջողուեց և  
Թայիփի հարսանիքից երեք ամիս յետոյ Սա-  
դրզ ըէյն ևս ամուսնացաւ տասնու վեց տա-  
րեկան գեղեցիկ, քաղցրահամբոյք վրացուհի  
Միզիրի հետ, որ ըստ երեսյթին շատ բազ-  
դաւոր էր համարում իրեն, որ ամուսին

եղաւ, այնպիսի գեղեցիկ և յայտնի մարդու, որպիսին Սագըզ բէյ-Էֆէնզին էր։ Սագըզը նորա մոխարէն վճարեց երկու հարիւր փունտ, բայց ընտւ չէր ափսոսում, որովհետք հէնց առաջին հայեացքից Միդիքը նրան շատ գուը եկաւ և շուտով ոկտեց բուլը որտով սիրել նորան։ Երիասարդ համեստ զոյզը ընտեկութիւն հաստատեց Ստամբուլի արևմտեան մասում, Եկ-Սարայ կոչուած թաղում, մի բաւականին գեղեցիկ զօնազում։

Անցան շատ տարիներ։ Սագըզը սարձրացաւ մինչեւ մամեթիզի \* աստիճանը և իւր սիրելի Միդիքի մօտ կատարելապէս բաղդաւոր էր զգում իրան այդ պաշտօնում։ Նա երկու գեղեցիկ և առողջակաղմ զաւակներ ունէր, եկամուտները թէև կամաց կամաց, բայց այնու ամենայնիւ տարէց տարի մեծանում էին և նորան հնարաւորութիւն էին տալիս կատարելապէս ընտանիքը պահելու։ Նա այլ ևս Թայիֆ բէյի հետ այնքան յաճախակի չէր տեսնուում, ինչպէս առաջ էր, բայց և այնպէս կանոնաւոր կերպով, առ նուազն շարաթը մի

\* Начальникъ отдѣленія.

անդամ՝ այցելութեան էր գնում նորա զունազը: Սազբզի Ակ-Սարայի իւր նոր համեստ ընակարսնը տեղափոխուելուց յետոց նորա յայտնի բարեկամը միտին մի անդամ՝ էր այցելել: Այնու ամենայնիւ Սազբզը տոյնանման ակներե արհամարտնքից ոչ մի անպատճեթիւն չէր զգում: Իւր առաջին և վերջին այցելութեան ժամանակ Թայիթին առացնորան, որ երկու հին և լաւ բարեկամների անձնական յարաբերութիւնների մէջ պէտք է խիստ կերպով պահպանել քաղաքավարութեան արաւաքին ձևերը: Այդ պատճառով որոշեցին, որ Սազբզը ծառայութիւնից վերադառնալիս ամեն անդամ՝ այցելէ Թայիթին, առանց սպասելու վերջնիս փոխ այցելութեան, որովհետեւ վերջնիս ժամանակը չի ներում յաճախակի և հեռաւոր տեղ հիւր գնալու:

Թայիթը ճշմարիտ որ սասաթիկ զբաղուած էր, թէև նորան անհանգուստութիւն տուող և շուտ ծերացնող գործերից ոչ ըուլորը բացառապէս պաշտօնական ընտառընութիւն ունէին: Որպէս մեհդութչի՝ գըլխաւոր քարտուղար, նա առհասարակ ուղիղիներից աւելի շուտ էր տեղեկութիւն ստանում ելեմտից նախարարութեան մէջ

մանող ըոլոր ինդքտուգրերի և առաջադրութեանց մասին, այնպէս որ շուատով ամբողջ Ստամբուլում և պալատում յայտնի դարձաւ, որ մի որ և է գործի աւելի արագ և առհասորակ յաջող ելք տալու միակ և ամենալաւ միջոցն է կանխապէս խորհուրդ հարցնել մեհքութչի էֆէնդի Թայիֆ ըէյից, թէե այդ գիմումը շատ անդամ շատ թանկ էր նստում։ Թայիֆ ըէյը շահասէր, բայց ճշմարտասէր մարդ էր, նա մեծ բաղչիշ պահանջում էր միայն այն գէպքերում, եթր գործը մեծ էր. վոքը գործերը չնչին վարձատրութեամբ էին իւրեանց լուծումը ստանում։

Կարճ ժամանակից յետոյ և Պօլսում սկսեցին խօսել Թայիֆի մասին, որպէս հարսւստ և զիրք ունեցող մարդու մասին։ Չպէտքէ կարծել, որ այդպիսով նախանձ և ատելութիւն զարթեցրեց նա դէպ ինքը։ Մի բանով միայն նորան գատապարտումէին՝ առհասարակ իւր հարստութիւնից շատ քիչ բաժին էր հանում բարեգործութեանց համար։ Շատ անդամ Սադրդ ըէյը ստիպուած էր իւր ծառայակիցներից և ծանօթներից Թայիֆ ըէյի մասին վատ ակնարկներ լսել, Սադրդը պաշտպանում էր նորան և պաշտ-

պանում սնկեղծ և համոզուած կերպով։  
Դուք Ռայիփին այնպէս չէք ճանաչում, ինչ-  
պէս ես։ Նա բարի և երախառագէտ մարդ է,  
նորա հողին միշտ ձգում է գէպ աւելի  
բարձրը, աւելի կատարեալը։ Այդ պատճա-  
ռալ էլ նա շատ մանր մունք բաներ չի  
նկատում։ Սարութիւնը և ժլատութիւնը  
նորա համար օտարութիւն։

Թէե նորա այդ կարծիքը համակրու-  
թիւն չէին գտնում և մինչեւ անգամ ան-  
մառթիւն էին համարւում, բայց և այն-  
պէս նոքա Սագրդի համար նոր նոր բարե-  
կամներ էին գտնում։

—Ի՞նչ բարի մարդ է Սագրդը, ասում  
էին շատերը նորա յետեից։ Նորա ազնիւ-  
սիրաը ըմբռնել անգամ չի կարող սասրու-  
թիւն առած բանը։

Մի վոթորկալից գիշեր աւերիչ հրդեհը  
բարձրացաւ Ակ-Սարայում և Սագրդի առւնը  
մի քանի այլ տների հետ միասին զոհ գնաց  
բացերին։ Նա հողիւ կարողացաւ իւր ըն-  
տանիքի կեանքը ազատել, իսկ ունեցած տմ-  
բողջ կայքը ոչնչացաւ։

Հետեւեալ օրը վաղ առաւօտեան Սա-  
գրդը գնաց Ռայիփի մօտ։

—Հը, ի՞նչ նորութիւն, բէյ, այս

խօսքերով ընդունեց Թագիփր Նորա ողջոյնը:

Իի ժամանակ նա սովորութիւն էր դարձրել Սագըզի հետ վարուել որոշ ձեռկանութիւններով: Սկզբներում Սագըզը նորա իր հասցէին ուղղած «ըէյ» բառի դորձածութիւնը իրըև մի սովորական հանագէր ընդունում այնպէս որ ինքն ևս երբեմն հանաքով պատասխանում էր նորան «պարոն աւագ քարառւզար» և կամ «մէհողութչի էֆէնդի» բառերով: Վերջինս նորից ոկտեց ընկերաբար վարուել անուանելով նորան Թագիփ, թէե աւագ քարառ զարը դարձեալ շարունակում էր «ըէյ» անունը տալ և երբեմն մինչեւ անդամ մի առանձին շեշտով էր արտասանում այդ տիտղոսը, կարծես զորանով կամենում էր ցոյց տալ, թէ հարուստ հզօր աւագ քարառուզարի և ըիւրօցի մի աննշան պաշտօնէի մէջ եղած տարբերութիւնը վերջ է գրել այն հաւասարութեանց որ մանկութիւնից ուշնէին նոքա: Սագըզի մաքովն անդամ չէր կարող անց կենալ, որ Թագիփը վազուց արդէն կամենում է իւրեանց ունեցած նախկին անկեղծ բարեկամական յարաբերութիւնները վոխարինել կատարեալ ձեռականութիւններով: Ահա հէսց այդ է պատճա-

ուր, որ երբ Թայիթը հարցրեց նորան՝ հը՝  
ի՞նչ նորութիւն կայ ըէց, նո նորան պա-  
տասխանեց ըոլորտին պարզ կերպով:

— Ենչպէս երեսում է դու գեռ չպիտես  
որ ինձ հետ դժբաղզութիւն է պատահել:

— Ա՛չ, ես ոչինչ չպիտեմ: Ի՞նչ է պա-  
տահել:

— Եմ ըոլոր ունեցուածո հրդեհը լա-  
փեց, տարսու:

— Թա՛ղ Ալլահը քեզ աւելի մեծ զըժ-  
շաղզութիւններից աղաս պահէ: Այժմո  
ի՞նչ ես մտադիլ տնելու:

— Կարծեմ շատ բնական է: Կամենում  
եմ նոր զօնազ կառուցանել. ի՞նչ կարող  
եմ մտածել . . .

— Հա, իհարկէ, իհարկէ, մտախան  
կերպով պատասխանեց Թայիթը:

Ես հէնց այդ բանի համար կամենցայ  
քեզանից խնդրել շնորհելու ինձ մի որոշ  
անհրաժեշտ գումար, հանդիսու և պարզ  
կերպով շարունակեց Թադըզը:

Ի՞նչ, բացականչեց Թայիթը և նորա  
նիհար ու դունատ դէմքի վերտայից յանկարծ  
անցաւ դառն անարդանքի արտացայտու-  
թիւն:

Սադըզն այդ չնկատեց:

—Ութ հարիւր ֆունտ, ասացնա հանգիստ  
կերպով՝ կարծելով որ Թայիֆի «ի՞նչ»ը մի  
սովորական հարցում է. իմ հաշուով այդ  
գումարը կատարելապէս կըստականայ  
լինձ:

—Ութ . . . հարիւր . . . ֆունտ . . .  
բարկացած բացականչեց Թայիֆը: Եւ ի՞նչ  
ու ոչ ութ հազար: Ինչպէս երեսում է քեզ  
համար դա աննշան գումար է, իսկ ինձ հա-  
մար, կարող եմ քեզ հաւատացնել, որ մեծ  
բան է: Զէ՞ որ դա իմ մի տարուայ ոռոճկից  
աւելի է:

Սադբղն անկարող լինելով մի բառ-  
անգամ արտասանել, զարմացած և շփո-  
թուած նայում էր բարեկամի վերայ:

—Ես տեսնում եմ, շարունակեց Թայի-  
ֆը քեզ աւելի հանգարա, բայց թշնամա-  
կան և ծաղրական ձեռվ, որ դու սկսել ես  
հաւատալ այն սուս, չարամիտ լուրերին,  
որ իրը թէ եռ՝ հարուստ, ամենակարող  
մեկտուրչի եմ, կառավարում եմ ելեմտից  
նախարարութեան բոլոր գործերը, շահւում  
եմ ամեն բանից և չգիտեմ, թէ ո՞րաեզ պա-  
հեմ իմ գլուխնը լցուող փողերը: Պու շատ  
լուր գիտես որ այդ ըոլոր զբարտանքների  
մէջ և ոչ մի ճշմարիտ խօսք չկայ և այն

վորքիկ գումարը, որ ես կարողացայ յետ  
ձգել այս բոլոր ժամանակուայ ընթացքում  
պատուզ է այն դառն աշխատանքի, որովհե-  
սին շատ քչերը կարող են յանձն առնել և  
կատարել:

Սադբզը դլուխը շարժելով, հանդարտ  
աչքերը դցեց նորա վերայ:

— Կ՞նչու այդ մասին չես դիմում  
հօրդ, ազդու կերպով շարունակեց Ռայենիքը:  
Աւելի լաւ չէ նրանից ստանալ այդ ողոր-  
մութիւնը, քան մի կողմնակի մարդուց: Դու-  
ինձանից լաւ դիտես, որ այսանդ խօսքը  
պարտքի մասին է, և դու քո չնչին կարո-  
ղութեամբ անկարող ես վճարել ութ հա-  
րիւր ֆունտի նոյն իոկ տոկոսը:

Սադբզը հանդարտ և լուռ կերպով փոր-  
ձեց վեր կենալ բազկաթուսի վերայից, որի  
վերայ ինքը նոտած էր Ռայենիքի հետ միասին,  
ըացց վերջինս ձեռքը հիւրի ուսի վերայ դրեց,  
հանդոտացնելով նրան:

— Ներկայումս, հաւանական է, դու-  
խիստ դժուարին կացութեան մէջ ես զդում  
քեզ, ասաց նաև և նորա ձայնը հնչեց աւելի  
քնքարար: Ես ուրախութեամբ պատրաստ  
եմ բարեկամաբար օգնել քեզ, որչափ ոյ-  
ժերս կերեն, մինչեւ որ հօրիցդ մի քան

ստանասու: Այսօր ճաշից յետոյ ե՛կ նախարար  
ըստթիւն, այնտեղ ես կյանձնեմ քեզ յի-  
տուն, բայց ո՞չ հարիւր ֆունտ որը դու  
պիտես կուզես իբրև ընծայ ընդունիր, կու-  
զես իբրև պարտք:

Հանգարար կերպով Սաղբզը ըստըրա-  
ցաւ տեղից յարգանօք գլուխ տալով կուրո  
դնաց, առանց մի բառ արտասանելու :

Երկար ժամանակ կնում էր Սաղբզը  
խոնարհած աչքերով, չնկատելով թէ ի՞նչ  
փաղացով է անցնում և թէ ի՞նչ էր կատա-  
րւում այնտեղ, խորին վիշտը մաշում էր  
նորա սիրտը: Նա դգաց, որ այս նոր ծանր  
վիշտը ընկճեց իբրև, որ նու այնպիսի կո-  
րուստ ունեցաւ, որ աւելի ծանր էր քան  
հարստութեան կորուստը, ուրիշ խորերով  
նորան մի անփոխարինելի կորուստ հասաւ:  
Նա նստեց մի առանձնացած տեղ և խորը  
կերպով սկսեց մտածել: Փոքը առ փոքը  
ամեն բան սկսեց պարզուել նորա հոգու մէջ:  
Նա հասկացաւ, որ ամբողջ կեանքի ընթաց-  
քում սխալ է հասկացել Թայիթին: Սաղբզի  
սիրտն այլ ես անկարող էր սիրել նորան,  
Նա լցուեց միայն դառն վշտերով:

Սրտարեկ և ախուր որսով Սաղբզը  
տուն՝ Ակ-Աարայ գնաց իբրև ժամանակաւոր

ապաստանարան տուող ծառայակցի մօտ  
որին հրդեհը չէր վնասել: Նորա ախուր  
արամագը թիւնը, և հարկէ, ոչ ոքի աշքի  
չէր ընկնի, որովհետեւ շատերն այդ դրա-  
թիւնը կվերագրէին նախընթաց գիշերուայ  
պատահարին, որ յափշտակեց նորա ամբողջ  
ունեցածը: Այդպիսով նորա թախիծի իս-  
կական պատճառն իրսե զաղանիք կրմնար,  
եթէ Ուայիֆի խղճի խայթը չոտիպէր իրան  
բաց անել իւր մեղքը: Դժբաղդ ժլատը չէր  
հասկացել Սաղըզի հոգու վեհութիւնը, նա  
հաւատացած էր, որ Սաղըզն ամենից առաջ  
կշտապէր զառնազին կերպով գանգատուիլ  
իւր ծանօթներին բարեկամի անգիտութեան  
վերայ:

Սաղըզի հեռանալուց յետոյ Ուայիֆը  
մի քանի անդամ վհատուած սենեակի մէջ  
անց ու գարձ արտւ: Ապա կամենալով  
բաժանել իր այդ զգացմունքները մէկի հետ  
նա զնաց հարեմ յայտնելու իր վիշտը կսոջը,  
Աիշէ խանումինս նա այնտեղ պատահեց իւր  
աներուջը՝ յարդելի Հաջի-Էշրիֆ բէյին: Ուայ-  
իֆը յարդանօք բարեկելուց յետոյ առաց.

— Այսօս ես առանձնապէս ուրախ եմ:  
որ տեսնում եմ ձեզ այստեղ, ես կամենում  
եկ խօսել Այիշէ խոնտամի հետ մի զորքի

մասին որի մէջ յոց ունի՞մ որ զոք եռ  
կըստանուկցէք:

Ույշիթը պատմեց Ապղբղի « տորօրի-  
նակ ու համարձակ խնդրի » և իւր տուած  
պատմախանի մասին:

— Խոստավանում եմ, վերջացրեց Ույշիթ  
ըեցը, որ եռ Ապղբղի այդ շահասէք քայլի  
համար բարկութեան աղղեցութեան տակ  
նորա հետ շատ խիստ վարուեցի, բայց որով-  
հետեւ եռ թափանցելով նորա սիրալը տեսայ  
և պարզ հասկացայ, որ նա իւր հետ պատ-  
ահած դժբաղդութիւնից կամենում է  
օգուտ քաղել, այդ պատճառով եռ ինձ  
ոնսպատւութիւն համարեցի թոյլ տալ նորան  
ինձ խաըելու: Ես կոպապարաք ասացի նորան,  
որ հարիւր կամ երկու հարիւր ֆունտ և ոչ  
առելի, գնում եմ նորա տրամադրութեան  
տակ, մինչեւ որ հօրից վազ սասնայ: Ահա  
այս խօսքերով ես նորան արձակեցի: Հաւա-  
ւատացէք, նորա տեղ ես ամաչեցի, տես-  
նելով, թէ ինչպէս նա կորագլուիր, որպէս  
մի յանցաւոր, գուրս պրծաւ այն ոնից,  
որի գաները ամեն ժամանակ սիրալիք կեր-  
պով բաց էին նորա տռած:

Տիրեց երկարատեւ և չարտահնջ լուու-  
թիւն: Հաջի Աշուշի ըեցը մտախոհ կերպով

ծծում էր իւր երկար չուբուզի սաժի ծայրը  
և ըստ էր թողնում ծխի թեթև քուլա-  
ներ: Այլու իսպառմը աչքերը ցած կցած  
շփոթուած նստած էր: Աերջապէս Հաջին  
ընդհատեց լուս թիւնը:

— Սադբդ ըէյլ երկիւզած և ազնիւ-  
մարդ է համապատասխան: Նոյն կարծիքին եմ և  
ես:

— Ուրեմն դուք կտայիք նորան այդ  
ուժ հարիւր ֆունտը:

— Կտայի:

— Գէհ, ուրեմն ես պէտք է խոստավան-  
ուիմ, ասոց Թայիֆ ըէյլ, ըստ երեսյթին  
աշխատելով խեղզել իւր մէջ այն ըարկու-  
թիւնը, որ ցինի թէ նո գերակշռող հան-  
դիսանայ դէպի իւր աները ունեցած յար-  
գանքը: Ես պէտք է խոստավանիմ, որ ինձ  
համար սեփական աշխատանքով ձեռք ըե-  
րած փողերը խիստ թանի են և ես չեմ  
կարող ամեն մի պատահովի բաժին հանել:

— Նորից տիրեց խորին լուս թիւն: Հաջի  
էշրէֆը կրկին մի քանի անգամ երկարատե-  
կերպով ծծեց չուբուզը: Թայիֆ ըէյլ իւր  
անհամըեր, մինչեւ անգամ դաժան հայեացըը  
դցեց նորա վերայ, ըայց ծերունի Հաջին  
այն մարդկանցից չէր, որ վախենար Թայիֆ

ըեցից, որին նա աքհամարհում էր շահասի-  
րութեան և ժլատութեան համար:

— Միթէ Սաղըզ բէյը քեզ համար պա-  
տահական մարդ է, առաց նա վերջապէս:  
‘նա քո բարեկամ’ն էր:

— Եմ վողերիս բարեկամը, գժգոհու-  
թեամբ առաց Թայիֆը:

— Քո վողերը քեզանից աւելի ‘նա-  
խանձախնդիլ’ բարեկամ չեն կարող ունենալ:

— Համարձակում եմ ձեզ խոնարհա-  
բար ինդըել, Հաջի-Էշքէֆ բէյ, առաց Թայի-  
ֆը, որ բացատրէք, թէ ի՞նչ է նշանակում  
այդ խօսքերը, նոքա ինձ համար մո թն են.  
և նորա ձայնի մէջ նկատելի էր դոպուող  
բարկութիւն:

Թեքելով իւս գեղեցիկ գլուխը կըծքի  
վերայ, Հաջին հանդարտ և մտախոհ կեր-  
պով արտասաննեց հետեւեալ խօսքերը, որ  
կարծես ինքն իրեն հետ խօսելիս լինէր:

— Խորամանկը ի՞նչ լաւ է իմանում  
իրերի արժէքը, գիտէ նոյնալէս, որ սոկին  
թանկագին բան է: Այդ պատճառով նա չի  
խնայում ո՛չ աշխատանք, ո՛չ հոգու որպէս  
զի ձեռք բերէ այդ: Բայց ով նրան ձեռք  
է բերում անդոքը հոգով և աղնիւ ճանա-  
պարհով, այդպիսին բարձրացնում է ոնկու-

դիմուր և շատ թանկ է զնահասում։ իոկով  
ամփին իւր բարեկամից աւելի է օվըում այդ-  
պիսին ինքն իրան է խարում։

Հաջին երեսը շուռ տուեց և, նայե-  
լով Թայիֆի երեսին, աւելացրեց։

— Աս այս բազեին կդնամ Սաղբղ սեցի  
մօտ և կիմնգըսեմ, որ ընդունէ ննձանից այն  
դումարը, որի համար առ այժմ կարիք ունի։

Դա մնաս բարե տոեց փետային ու  
աղջկան և կամաց ու հանդիտաւոր կերպով  
դուրս դնաց։

Թայիֆը մի խիստ հայեացք ձգեց նորս  
յետեից։ Քիչ յետոյ նա դարձաւ դէպի Այի-  
շէ խանումն այն յուսով, թե նա իւր հօրը  
կդատապարտէ, սայց խիստ սխալուեց։ Դու-  
րս ամբողջ էութեան մէջ նկատելի մի ան-  
համբերութիւն և տարակուսանք կալ։ Դա  
խոնարհեցրեց աչքերը դետին և լուռ նա-  
յում էր։

Թայիֆ բէյը շարժեց իւր ուսերը և  
դուրս դնաց զնապից։ Դա իր մէջ աշխարհի  
առաջ արդարանալու մի պահանջ զգաց։ Եւ  
թէև ամբողջ օրուայ ընթացքում իւր ծա-  
նօթների հետ ունեցած խօսակցութեանց  
մէջ նա աշխատում էր աւելի և աւելի զար-  
գարել իւր ասածները, այնպէս որ վերջ

և վերջոյ Սագըղը ներկայանում էր իրեւ մի համարձակ բռնութեամբ փող կորպոր, իսկ Թայիֆը, իրեւ մի մեծահոգի և մարդատէր մարդ, այնու ամենայնիւ նորա առածները և ոչ մի տեղ յաջողութիւն չէին գտնում։ Աչ ոք նրան չէր առում. «Քու լաւ ես վարուել», ըոլորը լուռ հեռանեում էին նորանից։

Սագըղը Թայիֆի իւր մասինա արածած զբարարութիւններից կարիք չուներ արդարանալու, որովհետեւ ոչ ոք նորան չէր հաւատում և Հաջի Էշրէֆ բէյը միակ հարուստը չէր, բու այդ օրեւը Սագըղի մօտ եկաւ և ցանկութիւն յայտնեց նրան պարտատէր գտնաւու։

Տաճկական կայսրութեան գլուխ էր բազմել այդ ժամանակիները մի կամապաշտ և անդամ ուղիթան, որի առաջ դողում էին ըոլոր մերձաւորները որովհետեւ նա, ինչպէս իւր նոյնակէս և այլոց մէջ՝ երբ նկատում էր անարդարութիւնն առում և հաւածում էր, նմանապէս նրա համար, որ նորա հարուստները կայծակի նման շանթում էին մեծաւ մասամբ բարձրաստիճան անձանց և մանաւանդ նրա համար, որ ամենաւերեք ուր որ սեփական աչքերով կարիք էր

տեսնում՝ գթառիրտ և վեհանձն կերպով  
սպացապան էր հանգիստնում։ Փողը նորա  
համար նշանակութիւն չունէր, և դեպի ուշ  
կին ունեցած բուռն ցանկութիւնը նորա  
համար մի ոտոք և արհամարհական բան էր։  
Գործերից գուրս սպասար ժամերում՝ սուլ-  
թանը շատ անգամ որտեղում էր և այդ-  
պիսի գեղքերում ոչ որոսրդութիւնը, ոչ  
ընթերցանութիւնը և ոչ էլ մինչև անգամ  
նորա կանանց խումբը անկարող էին նորան-  
երկար ժամանակ զբաղեցնել։ Պաշտամական-  
ները ոչ մի բանից այնքան չեին վախենում,  
որքան հզօր պետի այսպիսի բովիներից, երբ  
նորա գլխում յանկարծ ծագում էր այն  
միտքը՝ ուշադրութիւն դարձնել այս կամ  
այն բանի վերայ, որ ամեն կերպ աշխատում  
էին թագցնել նորա հոկող աշքերից։ Այդ-  
պատճառով գլխաւոր սպառատականները աշ-  
խատում էին ամեն կերպ զբաղեցնել սուլ-  
թաններ Կ. Պօլոսյ հասարակութեան կեան-  
քից։ Առցա մէջ խիստ յաճախ երեսն էր  
գալիս այն վատնգը, թէ ինչպէս անել, որ  
վատիշահը չկատանայ ուստի Կ. Պօլոսյ  
գեղքերի մասին եղած պատմութիւններն  
այնքան կանոնաւոր կերպով սկսեցին տեղի

ունենալ, որ կարելի էր համեմատել սուլթանի համարեա կարգացած ամենօրեայ լրագրերի հետ։ Բնականաբար Ակ-Մարզի հրդեհից երկու օր յետոյ սուլթանը շատ մանըսամասն տեղեկութիւններ ստացաւ երկու բարեկամների անջատման մասին։ Եյս անգամ սուլթանին պատմով պալատականը բարեխիղճ մասդ էր որ առանձնապես վայելում էր սուլթանի համականքը։ Դա համակըսութեամբ պատմեց Առքըզի մասին և դասն արհամարհանքով նկարագրեց Թայիֆի շահասիրութիւնը և ժլատութիւնը։

‘Օերունին աւարտեց իւր խօսքը։ Խոսըն լուսութիւն տիրեց որ միայն սուլթանը կարող էր ընդհատել։ Դա մտախոհ կերպով ու անորոշ նոյում էր։ Դորա խխոտ և հանգարտ դէմքի վերայ և ոչ մի մկանունք անգամ չէր շարժուում։ միմիայն այտերի և հակատի բարակ կաշին առկու ինչ կարմքեց։’

— Առնչեցէք ինձ Զափան օղիի Սակըզին առաց նա վերջապես և ո զարկեց զբանիլին։

Մի ժամից յետոյ Սակըզն արդէն պալատումն էր։ Դա երկիր զ չէր զդում իր մէջ, սրովհետեւ գիտէր, որ ինքը ոչ մի մեղք չի գործել, բայց այնու ամենայնին նորա

ովքար սաստիկ բարախում էր, զգալով ոք  
նիօք անհրաժեշտապէս ներկայանալու է  
ուղիթանին։ Հանդարս քայլերով նորան  
մատեցաւ սենեկապեաը և հրամայեց հետեւ  
իրեն և մի քանի մեծաշոք զահիներից  
անցնելուց յետոց տարաւ նորան, աշխար-  
հեց կարծես բալուսովին առանձնացած, մի  
առանձնառենեալ։ Ահա այնտեղ նստած էր  
ուղիթանը։

ուղըզը երեք Փաղիշահի մօտ չեր  
եղել ըայց գեռ եղիտառարդ հաստից  
սկսած լու ծանօթ էր պալատական կարդ  
ու կանոններին։ Դա մօտեցաւ ուղիթանին  
սրշեաւ հեռաւորութեան վերայ մասաւցա-  
նելու պարս ու պատշաճ մեծարանքը։ Դա  
երկիւղածութեամբ ցած էր նայում։ Սուլ-  
թանը հանդարս և ուշադրութեամբ նայում  
էր նորա վերաց։ Սաղըզի ազնու արարոյ  
դէմքը և բարձր ու կրովի կերպարանքը խիստ  
դիւր եկաւ նորան։

—Քեզ զժրախառութիւն է պատահել,  
առաց Փաղիշահը։

—Երբուրդ օրն էր որ իմ զննաղը այ-  
րուել է, պատախանեց Սաղըզը։

—Խօսու զորա մատին չէ, առաց ուղ-  
թանը անհամօներութեան նշան ցոյց տալով։

Դու քո մանկութեան ընկեր Թայիֆից հեռացել ես և լինչու։ Սադրդի շրթունքները դողդողում էին։ Դա լուս էր։

—Դու դիտես որ պէտք է պատասխանես, երբ քեզ հարցնում են, շարժնակեց Փադիշահը մի փոքր լուսթիւնից յետոյ։ Նորա ձայնի մէջ նկատելի էր սղորմածութիւն և հանդիսաւորութիւն։

—Ես պարտաւոր եմ ասել ճշմարտութիւնը, հանդարա կերպով պատասխանեց Սադրդը։

—Դէ, ուրեմն կոտարիս այն ինչ որ պարտաւոր ես ոնելու։

Սադրդն իր շունչը հոււաքեց։ Ակամացից ձեռքը գրեց սաստիկ բարախող որտի վերայ։ Առւլթանը կորեկցաւոր նայում էր նոր վերայ։

—Հրդեհից յետոյ ցած ձայնով և համարեա կակաղելով ոկուց Սադրդը ես գնացի Թայիֆի մօտ և խնդրեցի նրանից նոր զննադ կառուցանելու համար ժամանակաւոր օդ նութիւն։ Ես այժմո տեսնում եմ, որ այդ իմ կողմից անարդարութիւն էր՝ որովհետեղ զգում եմ, որ երբէք չէի կարող վճարել այդ պարաքը . . .

‘Դա կանգ առաւ։’

— Դէ՞հ, շարունակիիք:

— Թայիֆը ցոյց տուեց որ ես իրաւացել չեմ: Կա առաջարկեց ինձ, ուսպէս ընծայ, իմ խնդրած դումարի մի մառը... Ես առանց վեր առնելու հեռացայ:

— Այդ բոլորը ճշմարի՞տ է:

— Այն:

— Ճշմարտութի՞ւն է այն բոլորը, ինչ որ դու գիտես և զգում ես: Սադբզը մինչ դեռին խոնարհուեց և հեղութեամբ առաց.

— Ո՞հ, ամենակարող տէր, դու արդէն գիտես այն ամենը: Թէ ի՞նչ կարող էի ես ասել:

‘Կա մի վայրկեան կանդ առաւ և ապա մրմնջաց ցած ձայնով՝ խոնարհեցնելով աչքերը:

— Ես այլ ես չեմ բարկանայ Թայիֆի վերայ:

Սուլթանը լուռ նայում էր Սադբզի վերայ և նորա խոշոր աշքերի մէջ վայլատակեց քնքուշութեան և բարութեան կոյժքը: Յանկարծ նա շուռ եկաւ և դուքս եկաւ սենեակից, բայց խոկոյն վերադարձաւ ձեռքի մէջ բռնած ունենալով մոմով կնքած մի ծանր մետարսեայ քսակ:

— Վեր առ այդ, առաց նա քնքոյշ

ծայնով, և իմացիր, որ խալիքը իւրաքանչ  
շիւր բարի մաւսուլմանի հաւատարիմ պաշտ-  
ապանն է։ Դու կորցրիր անհաւատարիմ բա-  
րեկամիդ, բայց դատը մի հաւատարիմ հո-  
վանաւոր։ Փառք առոք Ալլահին ու դնա։

Սադրդի հեռանալուց յետոյ սուլթանը  
իսկոյն կանչեց իւր քարտուզարին և հրա-  
մայեց նրան իսկոյն և եթ գնալ արդարա-  
դատութեան նախարարի մօտ և յացոնել  
իրա բարձրագոյն հրամանը, որ իսկոյն և եթ  
իիստ քննութեան ենթարկէ ել և մտից նա-  
խարարութեան մեկտութչի Սպասարկի նրայի-  
ֆի գործերը։ Եթէ Ռայիֆ բէցը չկարողանայ  
ցոյց տալ որ իւր կարողութիւնը ձեռք է  
բերուած ազնիւ աշխատանքով, եթէ նա-  
կաշառակերութեան մէջ մեզաւոր հանա-  
չուի, այն ժամանակ պէտք է նորա ամրող  
կարողութիւնը յարքանիս դրաւել և իրան  
աքսութել Քիսո կղղին։

Արդարագատութեան նախարարը մոր-  
ծուած մարդ էր և դիտէր, թէ ի՞նչ արա-  
գութեամբ պէտք է կատարել սուլթանի  
հրամանը։ Կարեոր կարդադրութիւններ ա-  
նելուց յետոյ, նու մինչեւ արեւ մայր մըտ-  
նելը հարց ու փառք արեց Ռայիֆ բէցին և  
քսան վիճաներին և պարզ կերպով դուրս

ըերեց, որ բացի Այիշէ խանումի ըերած օժիտից նորա կարողութեան, եթէ ոչ ըռըը, դոնէ մեծ մասը անազնիւ ճանապարհով կաշառակերութեան և զրկանքների միջոցաւ է ձեռք ըերւած:

Հետեւեալ օքը նախարարը կարգադրեց յարքունիո դրաւել Թայիֆի ըոլոր կարողութիւնը, իսկ մի օք յետոյ նաւ պատրաստեց, որով աքսորեց Թայիֆին Քիոս կղզին: Այդ դործողութիւնների ամբողջ ընթացքում Թայիֆը իրեն պահում էր արի և պատուաւոր կերպով: Նա երբէք չէր կասկածում, որ այդ քննութիւնը յառաջացել է նորա դէմ բարձրագոյն հրամանի համաձայն: Այս պատճառով նա խոսավանուելով իր մեղքը, առաջարկած ըոլոր հարցերին տալիս էր պարզ և արդար պատասխաններ, ոչ մի արդարացուցիչ միջոցների չէր դիմում: Չէր մերժում և ոչ մի վկայութիւն իր մտուին և լոեց իւր գտառավճիռը խնարհութեամբ և գաղմանովի անձնիշխանութեամբ: Կորա դէմքի վերայ Նկառում էր խորը մահագոյն անդուրութիւն: Նա կարծես անզգայացել էր և միմիայն դուռաստ դէմքից, մթին և փոս ընկած աչքերի յուսահատական հայեսացքից կարելի էր նկա-

տել, թէ նո՞ւ ի՞նչ սարսափելի կերպով տա՞նջ-  
ում էր:

Քիոս հասնելուն պէս դատապարտեա-  
լը ընտկութիւն հաստատեց իրա համար  
նշանակուած խճճիթում: Կորան աքսոր տա-  
նող նաւասաները կաշառուած էին Հոջի-  
հշեֆ բէյից և շուտով կզզու վերայի աղ-  
դեցիկ մարդիկ իմացան, որ Թայիֆ բէյին  
մատուցած ամեն մի ծառայութիւն առա-  
տաձեռն կվարձատրուի: Բայց աքսորեալը  
ոչ մի ցանկութիւն չունէր: ոչ մի բան նորան  
այլ ևս չէր ուրախացնում: ոչ մի բան չէր  
կարող թեթեացնել տանջանքները: Նա մե-  
ռաւ վեց ամսեայ աքսորանքից յետոյ խոր-  
տակուած որտով առանց մի տրառւնջ ան-  
գամ արտայայնելու:

Թայիֆ բէյի զոյքը և ունեցած դրա-  
մագլուխը սուլթանի հրամանի համաձայն  
յանձնուեց ի տնօրինութիւն բարեգործա-  
կան հիմնարկութեանց նախարարութեան  
կոյրերի հոմար ապաստանարան հիմնելու:  
Սազբու վարձատրուելով նազերի պատուա-  
նունով նշանակուեց այդ հիմնարկութեան  
տեսուց և այդ պատուա: որ պաշտօնի / մէջ  
մնաց մինչեւ մահը: Նա միշտ ոչքի է յ ընկ-  
ում իր միակեսպ քնքոյց և քազց վայ-

մունքով և նորա լաւ ճանաչաղների կարծի-  
քով նա պէտք է գոհ լինէր իւր վիճակից,  
որսինեան սուլթանը շատ տնդամ ցոյց էր  
տալիս իւր յարդանքը դէպ նաև Բայց նորա  
դեղեցիկ և երբեմն անհող դէմքի վերայ  
այժմո նկատելի էր հանգարա թախծի սուրբ  
դրոշը և հաւատարիմ Միզիքը դիտէր որ  
նա տանջւում է իւր կորցրած բարեկամի  
համար:

